ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրականացվել է «Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում

2015թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համառոտ նկարագրություն 2
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6
2. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԽՄԲԵՐԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ 8
ՎԵԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 8
2.1 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (կենտրոնական, մարզային և տեղական մարմիններ) 8
Ընդհանուր նկարագիր. կարողություններ 8
Խնդիրներ և կարիքներ 14
Մարտահրավերներ և լուծումներ 16
2.2. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ 18
Ընդհանուր նկարագիր. կարողություններ 19
Խնդիրներ և կարիքներ 22
Մարտահրավերներ և լուծումներ 24
2.3. ՏԵՂԱԿԱՆ ՀԿ-ՆԵՐ 26
Ընդհանուր նկարագիր. կարողություններ 26
Խնդիրներ և կարիքներ 30
Մարտահրավերներ և լուծումներ 34
2.4. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36
Ընդհանուր նկարագիր. կարողություններ 36
Խնդիրներ և կարիքներ 39
Մարտահրավերներ և լուծումներ 40
2.5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ 41
Ընդհանուր նկարագիր. կարողություններ 41
Խնդիրներ և կարիքներ 44
Մարտահրավերներ և լուծումներ 45
2.6. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 46
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ 47
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ԿԱՊ Է ՀԱՍՏԱՏՎԵԼ 54

Համառոտ նկարագրություն

Սույն վերլուծության մեջ ներկայացված են Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում շահագրգիռ կողմերի հարցման արդյունքները: Հարցման նպատակն է հայտնաբերել և ցուցադրել հանքարդյունաբեության ոլորտում շահագրգիռ կողմերի գործունեությունն ու կարողությունները, առանձին հարցերն ու կարիքները, ինչպես նաև Հայաստանում հանքարդյունաբերական ոլորտին առնչվող խնդիրներն ու դրանց հնարավոր լուծումները: Հարցմանը մասնակցած շահագրգիռ կողմերի թվում են կենտրոնական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական հաստատությունների, տեղական ՀԿ-ների, հանքարդյունաբեության ընկերությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Ստորև բերված են յուրաքանչյուր շահագրգիռ խմբի պատասխանների հիման վրա կատարված մի քանի կարևոր բացահայտումներ՝

- Կենտրոնական կառավարման մարմիններ – կենտրոնական մարմինների ներկայացուցիչների կողմից հանքարդյուանբերության ոլորտում նշած գլխավոր խնդիրների թվում են՝ փորձառության/որակավորման/գիտելիքի և ներդրումների պակասը և նպատակային մշտադիտարկման/մոնիտորինգի և մասնագետների վերապատրաստման կարիքը: Հետագա ծրագրերի առումով կառավարության կենտրոնական մարմինների ներկայացուցիչները կարևորեցին՝ իրավական դաշտի կարգավորումը նոր ներդրումներ գրավելու համար, շրջակա միջավայրի/բնապահպանական մոնիտորինգի և համաճարակագիտական ուսումնասիրությունների իրականացումը ոչ վարակիչ հիվանդությունների պատճառական կապերը բացահայտելու համար, ավելի մեծ թվով բարձր վարձատրությամբ աշխատատեղեր ստեղծելը, ուժեղացնել հանքերի անվտանգությունը և ավելի լայն համագործակցություն հաստատել մարզային ու տեղական ինքնակառավարաման մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ:

- Մարզային կառավարման մարմիններ – մարզային կառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից նշված խնդիրների թվում են ներդրումների, փորձառության և ենթակառուցվածքների պակասը, չափազանց շատ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի առկայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օգտակար հանածոների արդյունահանումն ու վերամշակումն ուղեկցվում է մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վնասակար թափոնների և արտանետումների հսկայական քանակներով: Հետագա ծրագրերի առումով մարզային կառավարական մարմինների ներկայացուցիչները նշեցին՝ առաջնայինն այն է, որ քննության ենթարկվեն վնասակար արտանետումները, դրանց բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով, ինչպես նաև էլ ավելի լայնորեն համագործակցել մասնագետների և կազմակերպությունների հետ:

- Տեղական ինքնակառավարական մարմիններ – տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները նշեցին, որ իրենց ունեցած խնդիրների թվում են բնապահպանական հարկերի ու վճարների հավաքագրումը, շրջակա միջավայրի պահպանությունը, հատկապես այն պարագայում, երբ պոչերը հոսում են դեպի մոտակա գետերը, որոնց ջուրն օգտագործվում է գյուղատնտեսական տարածքների ոռոգման համար, զանգվածային ծառահատումը, գյուղատնտեսական նշանակության հողերի բռնագրավումը՝ օգտվելով պետական կարիքների համար սեփականության բռնի օտարման իրավունքից, և օդի աղտոտվածությունը: Բնապահպանական ստանդարտների կատարելագործման հնարավորության մասին հարցին տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները պատասխանեցին, որ դրանք պետք է էլ ավելի խստացվեն, հատկապես արտոնագրման և հանքարդյունաբերական ընկերությունների կողմից աղտոտվածության մասին տեղեկացման առումով:

- Գիտական հաստատություններ – գիտական հաստատությունները նշեցին, որ բախվում են հետևյալ դժվարություններին՝ հանքարդյունաբերական գործունեության և երկրաբանական տվյալների մասին տեղեկատվությունը խիստ գաղտնի է և հաճախ անհասանելի, գիտական հաստատությունների կողմից արվող առաջարկությունները առավելապես մերժվում են և չեն կիրառվում, կառավարությունը հաշվի չի առնում կառավարությունից դուրս գտնվող աղբյուրներից եկող առաջարկությունները, տեղական փորձագետները չեն ներգրավվում հանքարդյունաբերական ընկերությունների կողմից հանքերի հետախուզման, նախագծերի մշակման և այլ աշխատանքներում, իսկ հանքարդյունաբերական ընկերությունները չեն իրականացնում ուսանողական պրակտիկաներ՝ ուղղված գիտելիքների և կարողությունների զարգացմանը: Գիտական հաստատությունները նշեցին հետևյալ բարեփոխումները, որ կցանկանային տեսնել հանքարդյունաբերության ոլորտում՝ մեծացնել թափանցիկության և հանրության առջև պատասխանատվության աստիճանը, հատկապես երկրաբանական ուսումնասիրությունների, հանքարդյունաբերական գործունեության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված աշխատանքներում, խուսափել հանրային լսումներից, որոնց ժամանակ պահպանվում են ձևականությունները, սակայն լրջորեն չի ներգրավում կամ ինտեգրվում հասարակական կարծիքը, և հաշվի առնվեն հարգված գիտական հաստատությունների տեսակետները:

- Տեղական ՀԿ-ներ – տեղական ՀԿ-ների ներկայացուցիչները նշեցին Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված հետևյալ

խնդիրները՝ բնապահպանական և իրավական հարցերի մասին հանրային իրազեկության ցածր մակարդակը, լավ զարգացած քաղաքական մշակույթի ներքո գործող կազմակերպված քաղաքացիական հասարակության բացակայությունը, պետական հաստատությունների կողմից հրապարակվող համապատասխան տեղեկատվության բացակայությունը, պետական մարմինների կողմից վերահսկողության իսպառ բացակայությունը և փորձագետների ներգրավման ցածր մակարդակը: Հանքարդյունաբերության հատվածում լուծումների առումով տեղական ՀԿ-ները նշեցին հետևյալը՝ մշակել ոլորտի համապարփակ ռազմավարություն՝ հիմնված եկամուտների և երկարաժամկետ բնապահպանական վնասի իրատեսական և գիտականորեն հիմնավորված գնահատման վրա, բարեփոխել բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանական վճարների համակարգը, ավելացնել հարկերը, ինչպես նաև այլ վճարներն ու տուգանքները, դասակարգել պոչամբարներն ըստ իրենց վտանգավորության կարգի և իրականացնել թափոնների հարկում:

- Հանքարդյունաբերական ընկերություններ – հանքարդյունաբերական ընկերությունները նշեցին, որ հանքարդյունաբերության ոլորտում պետք է ձեռնարկել հետևյալ քայլերը շրջակա միջավայրի և հասարակական/սոցիալական պատասխանատվության ժամանակակից ստանդարտների ապահովման համար՝ բարեփոխել ՀՀ շջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենքը, մեծացնել կարողությունները շրջակա միջավայրի վրա ազդեցությունն ավելի ճիշտ գնահատելու համար, բարելավել արտոնագրերի տրամադրման գործընթացը, խստացնել աղտոտումների մասին տեղեկացնելու պահանջները, կատարելագործել անվտանգության կանոնակարգերը, և որտեղ անհրաժեշտ է թարմացնել հին կանոնակարգերը տեխնոլոգիական առաջընթացին համաքայլ գնալու համար; Հետագա ծրագրերի հետ կապված՝ ընկերություններից մեկը նշեց, որ մտադիր է համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի հետ իրենց ընկերության հանքարդյունաբերական գործունեությունը բնապահպանական և սոցիալական կառավարման, ինչպես նաև հասարակության վստահության և աջակցության առումով օրինակելի ծրագիր դարձնելու նպատակով:

- Միջազգային կազմակերպություններ – հարցմանը մասնակցած միջազգային կազմակերպությունները Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում նշեցին հետևյալ խնդիրները՝ օրենքի վատ կիրարկում, հանքարդյունաբերական ընկերությունների գործունեության մասին տեղեկատվության բացակայություն, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա անդառնալի հետևանքներ, ինտենսիվ հանքարդյունաբերական շրջանների աղքատացում, և կառավարության որոշումը դառնալ «կցորդային» երկիր, որը թույլ է տալիս զարգացած երկրներին շահագործել Հայաստանի բնական պաշարները,

հնարավորություն է տալիս վճարել ցածր հարկեր և ստեղծել տարբեր բնապահպանական խնդիրներ: Հետագա ծրագրերի առումով միջազգային կազմակերպությունները նշեցին՝ ուսումնասիրել կապը աղքատության և շրջակա միջավայրի միջև, աջակցել հանքարդյունաբերական թափոնների օրենքով կարգավորմանը և առաջ մղել համագործակցությունը բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվության հիմքում ընկած է հանքարդյունաբերության ոլորտում շահագրգիռ կողմերի վերլուծությունը: Հաշվետվությունը պատրաստվել է *Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում* ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի և Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցի (ԿԲՀԿՑ) կողմից Հաց Աշխարհին Զարգացման ծառայության ֆինանսական օժանդակությամբ:

2015թ. մարտ-մայիս ընկած ժամանակահատվածում Հայաստանի Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական հրավերով շահագրգիռ կողմերին առաջարկվել է մասնակցել վերոնշյալ վերլուծությանը՝ լրացնելով ԿԲՀԿՑ-ի կողմից մշակված հարցաթերթը (տե՛ս Հավելված 1-ում), որը բաղկացած է 25 հարցից և նախատեսված է յուրաքանչյուր շահագրգիռ կողմի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները ձեռք բերելու համար՝

- Շահագրգիռ խմբերի ընդհանուր նկարագիր և կարողություններ,
- Շահագրգիռ խմբերի խնդիրներ և կարիքներ,
- Հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված մարտարավերները Հայաստանում և շահագրգիռ խմբերի կողմից նշված հնարավոր լուծումները:

Բոլոր 56 շահագրգիռ կողմերից, որոնց ուղարկվել էր հարցաշարը, պատասխանել են 32-ը (տե՛ս ամբողջական ցանկը Հավելված 2-ում): Որոշ մարդիկ նախընտրել են հարցերին պատասխանել դեմառդեմ հարցազրույցի ընթացքում հարցաթերը լրացնելու փախարեն:

Սույն վերլուծության իմաստով *շահագրգիռ կողմը* սահմանվում է որպես անհատ, խումբ, կազմակերպություն կամ պետական մարմին, որն ունի շահեր և/կամ որոշում կայացնելու իշխանություն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում: Ստորև բերված է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում շահագրգիռ կողմերի ցանկը՝

- Պետական մարմինները կենտրոնական և մարզային մակարդակում, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինները,
- Գիտական հաստատությունները,
- Հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները),
- Մասնավոր ընկերություններ,
- Միջազգային կազմակերպությունները:

Շահագրգիռ կողմերի ցանկը, որոնց հետ կապ է հաստատվել, ներառում է հետևյալ կազմակերպությունները՝

- Հայաստանի Հանրապետության 10 նախարարությունները, 2 տարածքային կառավարման մարմինները մարզերում, որտեղ զբաղվում են ինտենսիվ հանքարդյունաբերական գործունեությամբ (Լոռի մարզ և Սյունիքի մարզ), և 5 համայնքների ղեկավարները հանքարդյունաբերական գործունեության ազդեցությունը կրող այդ երկու մարզերում,
- 7 գիտական հաստատություններ, այդ թվում համալսարաններ և Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) բաժանմունքներ,
- 16 տեղական ՀԿ-ներ,
- 7 մասնավոր ընկերություններ, որոնք շահագործում են ամենախոշոր մետաղական հանքավայրերը Հայաստանում,
- 9 միջազգային կազմակերպություններ, որոնք աջակցում են հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը և ունեն ազդեցության որոշ աստիճան ոլորտում

2. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԽՄԲԵՐԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (կենտրոնական, մարզային և տեղական մարմիններ)

Յոթ նախարարությունների, մեկ մարզպետարանի (տարածքային կառավարման կառույց) ներկայացուցիչների և երեք գյուղապետերի կողմից տրամադրվել են լրացված հարցաթերթերը: Նրանց պատասխաններն ամփոփված են ստորև:

Ընդհանուր նկարագիր. կարողություններ

Աղյուսակ 1-ում բերված են հարցաթերթին պատասխանած կենտրոնական, տարածքային և տեղական կառավարման մարմինների ցանկը՝ հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված իրենց գործունեությամբ:

Աղյուսակ 1. Պետական մարմիններն ըստ իրենց գործունեության[1]

Մարմին	Գործունեություն
Կենտրոնական մարմիններ [2]	
Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն	• Օրենսդրություն • Կանոնակարգում • Կառավարում
Առողջապահության նախարարություն	• Սոցիալական գնահատում • Քննություն
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	• Սոցիալական գնահատում
Բնապահպանության նախարարություն	• Օրենսդրություն • Կանոնակարգում
Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	• Քննություն
Տրանսպորտի և հաղորդակցության նախարարություն	• Կանոնակարգում
Քաղաքաշինության նախարարություն	• Կանոնակարգում
Մարզային մարմիններ	
Լոռու մարզպետարան	• Կանոնակարգում • Կառավարում

[1] Հ1
[2] Հ3

	• Քննություն • Բնապահպանական և սոցիալական գնահատում • Հողի կառավարում, վաճառք
Գյուղապետարաններ	
Շնող համայնք	• Հողի կառավարում, վաճառք
Թեղուտ համայնք	• Հողի կառավարում, վաճառք • Քննություն
Քաջարան համայնք	• Հողի կառավարում, վաճառք • Բնապահպանական և սոցիալական գնահատում

Աղյուսակ 2-ում բերված է կենտրոնական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունների շրջանակը:

Աղյուսակ 2. Պետական մարմինների պատասխանատվության շրջանակը[3]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Քաղաքականության մշակում • Օրենսդրություն • Հողերի կառավարում • Իրավապահպանություն • Մոնիթորինգ • Ազդեցության գնահատում, դիտողություններ	• Հողերի կառավարում • Իրավապահպանություն • Մոնիթորինգ • Հանրային պատասխանատվություն	• Իրավապահպանություն • Հողերի կառավարում • Մոնիթորինգ • Հանրային պատասխանատվություն

Բոլոր նախարարությունների ներկայացուցիչները, բացառությամբ բնապահպանության նախարարության, հայտնել են, որ հանքարդյունաբերության ոլորտը որևէ ազդեցություն չունի իրենց գործունեության վրա: Բնապահպանության նախարարությունը պատասխանել է, որ հանքարդյունաբերության ազդեցությունը բացասական է՝ հաշվի առնելով, որ հանքարդյունաբերության ցանկացած գործունեություն ունի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Լոռու մարզպետարանից հայտնել են, որ հանքարդյունաբերության հարցերը կապված են իրենց աշխատանքների հետ՝ առանց հատուկ նշելու որևէ դրական կամ բացասական հետևանք: Թեղուտի և Քաջարանի ներկայացուցիչները կարծիք են հայտնել, որ հանքարդյունաբերությունը ունի և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ, մինչդեռ Շնողի ներկայացուցիչը նշել է միայն բացասական ազդեցությունը:[4]

[3] Հ15
[4] Հ2

Ի պատասխան հանքարդյունաբերության հետ կապված աշխատանքներում ներգրավված մարդկանց թվի մասին հարցին, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները հայտնել են, որ նման աշխատողների թվաքանակը 1-ից մինչև 10 հոգի է: Տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը և քաղաքաշինության նախարարությունը աշխատողների մասին հարցին չեն պատասխանել: Ե՛վ Լոռու մարզպետարանի, և՛ Քաջարանի քաղաքապետարանի ներկայացուցիչներն ասել են, որ այդպիսի աշխատողների թվաքանակը 2-ից 10 հոգի է: Շնող և Թեղուտ գյուղերի ղեկավարության ներկայացուցիչները նշել են ոլորտում զբաղված մարդկանց թիվը 100-ից 500-ի սահմաններում:[5]

Պատասխանող պետական մարմինների գիտելիքն ու փորձը օգտակար հանածոների պաշարների կառավարման հետ կապված հարցերի առումով ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Պետական մարմինների գիտելիքն ու փորձը[6]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Գործընթացի մոնիթորինգ • Իրավապահպանություն • Շրջակա միջավայրի պահպանություն	• Իրավապահպանություն • Գործընթացի մոնիթորինգ • Քաղաքացիների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում • Մարդու իրավունքներ • Շրջակա միջավայրի պահպանություն	• Իրավապահպանություն • Քաղաքացիների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում • Մարդու իրավունքներ • Շրջակա միջավայրի պահպանություն

Աղյուսակ 4-ում բերված են մեխանիզմները, որոնք պատասխանող պետական մարմինների կողմից կիրառվում են հանքարդյունաբերական գործունեությունը վերահսկողության տակ պահելու համար:

[5] Հ6
[6] Հ5

Աղյուսակ 4. Պետական մարմինների կողմից կիրառված վերահսկողական մեխանիզմներ[7]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Օրենքի հետ համապատասխանության ստուգում • Մոնիթորինգի փաստագրում • Անվտանգության վկայագրերի քննության անցկացում	• Համապատասխան մասնագետների կողմից կանոնավոր մշտադիտարկման այցեր շահագործվող հանքավայրերում՝ խնդիրները բացահայտելու և ցուցումներ տալու նպատակով • Համապատասխան մարմինների տեղեկացում բնապահպանական և բնական պաշարների օգտագործման խախտումների դեպքերի մասին	• Ոչ մի վերահսկողական մեխանիզմ

Աղյուսակ 5-ում բերված են տեխնիկական ռեսուրսները, որոնց միջոցով պետական մարմինները լուծում և իրականացնում են հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված հարցերն ու աշխատանքները:

Աղյուսակ 5. Պետական մարմինների կողմից օգտագործվող տեխնիկական միջոցները[8]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Կադրային ռեսուրսներ (որոշ համապատասխան մասնագետները նշված են) • Տեխնիկական կարողություններ (համակարգիչներ, լաբորատոր սարքավորում) • Լրատվամիջոցներ	• Կադրային ռեսուրսներ (որոշ համապատասխան մասնագետները նշված են) • Լրատվամիջոցներ	• Կադրային ռեսուրսներ • Լրատվամիջոցներ

Տարբեր պետական մարմինների համար հանքարդյունաբերական ոլորտի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներն, ըստ շահագրգիռ կողմերի համար կարևորության, թվարկված են Աղյուսակ 6-ում:

[7] Չ13
[8] Չ16

Աղյուսակ 6. Պետական մարմինների համար տեղեկատվության հիմնական աղբյուրները[9]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Համապետական լրատվամիջոցներ • Հանքարդյունաբերական ընկերությունների հաշվետվություններ, համացանցային կայքէջեր • ՀՀ կառավարություն • Տեղական ինքնակառավարման մարմիններ • Միջազգային և տեղական ՀԿ-ների զեկույցներ, համացանցային կայքէջեր • Պատվիրված ուսումնասիրություններ, զեկույցներ • Գիտական աշխատություններ • Տեղական լրատվամիջոցներ • Միջազգային լրատվամիջոցներ	• ՀՀ կառավարություն • Տեղական ինքնակառավարման մարմիններ • Գիտական աշխատություններ • Միջազգային և տեղական ՀԿ-ների զեկույցներ, համացանցային կայքէջեր • Համապետական լրատվամիջոցներ • Տեղական լրատվամիջոցներ • Միջազգային լրատվամիջոցներ • Հանքարդյունաբերական ընկերությունների հաշվետվություններ, համացանցային կայքէջեր • Պատվիրված ուսումնասիրություններ, զեկույցներ	• Համապետական լրատվամիջոցներ և հանքարդյունաբերական ընկերությունների հաշվետվություններ, համացանցային կայքէջեր • Պատվիրված հետազոտություններ, զեկույցներ և գիտական հոդվածներ • Մարզային լրատվամիջոցներ • Միջազգային լրատվամիջոցներ

Պետական մարմինների կողմից կիրառվող հասարակության հետ կապերի եղանակների թվում են համապետական և մարզային լրատվական հաղորդագրությունները և տեղական համայնքային հանդիպումները: Պատասխանող նախարարություններից մի քանիսը (օր.՝ Բնապահպանության նախարարությունը, Առողջապահության նախարարությունը) որպես հասարակության հետ կապերի գործիք օգտագործում են նաև իրենց պաշտոնական կայքէջերը:[10]

Պետական մարմինների հիմնական թիրախային խմբերի ցանկը բերված է Աղյուսակ 7-ում:[11]

[9] Հ20
[10] Հ11
[11] Հ7

Աղյուսակ 7. Պետական մարմինների թիրախային խմբերը

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Կենտրոնական կառավարման մարմիններ • Տեղի բնակչություն • Հանքարդյունաբերական ընկերություններ • Տեղական իշխանություններ • ՀԿ-ներ	• Չեն նշել որևէ մեկին	• Տեղական իշխանություններ • Պետական կառավարման մարմիններ • Տեղի բնակչություն • Հանքարդյունաբերական ընկերություններ • Տեղական գործարարություն • Գյուղատնտեսությամբ զբաղվողներ

Աղյուսակ 8-ում բերված է այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ գործակցում են կենտրոնական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև համագործակցության ոլորտները:[12]

Աղյուսակ 8. Կազմակերպություններն ու կառավարման մարմինների համագործակցության ուղղությունները

Կազմակերպություններ	Ուղղություններ
Պետական կառավարման մարմիններ	
• Նախարարություններ • Կենտրոնական կառավարման մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ	• Տեղեկատվության մատչելիություն և փոխանակում • Անվտանգության հետ կապված հարցեր
• Մարզային իշխանություններ	• Տեղեկատվության մատչելիություն և փոխանակում
• Տեղական ինքնակառավարման կառույցներ	• Տեղեկատվության մատչելիություն և փոխանակում
• Տեղական ՀԿ-ներ	• Անվտանգության հետ կապված հարցեր
• Միջազգային ՀԿ-ներ	• Անվտանգության հետ կապված հարցեր
• Հանքարդյունաբերական ընկերություններ	• Անվտանգության վկայագրերի մշակում
Մարզային իշխանություն	
• Պետական իշխանություն	• Օրենսդրական հարցերի քննարկումներ • Տեղեկատվության մատչելիություն և փոխանակում
• Տեղական ՀԿ-ներ և հանրություն	• Հարցերի քննարկում և խնդիրների

[12] Հ8

	բացահայտում
• Հանքարդյունաբերական ընկերություններ	• Հանքարդյունաբերության հետ կապված հարցեր
• Համապետական և մարզային լրատվամիջոցներ	• Հստակեցում • Տեղեկատվության տարածում
Տեղական իշխանություն	
• Բնապահպանական ՀԿ-ներ	• Շրջակա միջավայրի պահպանություն • Բնական պաշարների ամբողջականություն

Խնդիրներ և կարիքներ

Աղյուսակ 9-ում ամփոփված են հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված խնդիրները, որոնց բախվում են պետական մարմինները, ինչպես նաև դրանց հնարավոր լուծումները:

Աղյուսակ 9. Խնդիրներ, որոնց հետ բախվում են պետական կառույցները

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
Խնդիրներ[13]		
• Իրավական հարցեր • Հողի աղտոտման վերաբերյալ տվյալների բացակայություն • Նպատակային վերահսկողություն • Մասնագետների վերապատրաստման կարիքներ	• Հանքարդյունաբերական և բնապահպանական հարցեր տարածաշրջանում	• Բնապահպանական վճարներ և դրանք հավաքելու հետ կապված խնդիրներ • Բնապահպանական խնդիրներ, հատկապես կապված պոչերի հետ, որոնք լցվում են մոտակա գետը, որի ջրով ոռոգվում են գյուղացիների դաշտերը • Զանգվածային ծառահատում • Բնակչության գյուղատնտեսական հողերի յուրացում հանրային գերակա շահի ներքո • Օդի աղտոտում
Լուծումներ [14]		
• Փոփոխություններ և լրացումներ օրենսդրության մեջ • Մասնագետների	• Լուծումները բերված են Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական	• Չեն տեսնում ոչ մի լուծում

[13] Հ9
[14] Հ10

վերապատրաստում	զարգացման ծրագրում	

Դատելով պատասխաններից՝ կառավարության բոլոր օղակներն ունեն վերապատրաստման և գործնական փորձի կարիք աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով, կարողությունների հզորացման և գիտելիքների ավելացման անհրաժեշտություն:[15]

Մասնագիտական աջակցության ձևերն այս նպատակով առանձնացված և նշված են Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Պետական մարմիններին անհրաժեշտ մասնագիտական աջակցության ձևերը[16]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Աշխատողների կարողությունների հզորացում • Տեղեկատվություն, տվյալներ • Սարքավորում • Ֆինանսներ	• Աշխատողների կարողությունների հզորացում • Պատասխանատվություն, լիազորություն • Տեղեկատվություն, տվյալներ	• Պատասխանատվություն, լիազորություն • Աշխատողների կարողություններ ի հզորացում • Տեղեկատվություն, տվյալներ

Պատասխանող պետական մարմինների կողմից ընտրված հատկապես օգտակար վերապատրաստման թեմաները բերված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Պետական կառույցների կողմից ընտրված վերապատրաստման թեմաներ[17]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Իրավական և օրենսդրական կանոնակարգեր (2-ից մինչև 15 օր) • Հանքարդյունաբերության ոլորտի առաջավոր փորձը (2-ից մինչև 15 օր) • Հողի սեփականության	• Իրավական և օրենսդրական կանոնակարգեր (մոտ 1 շաբաթ) • Հանքարդյունաբերությա ն ոլորտի առաջավոր փորձը (մոտ 1 շաբաթ)	• Հանրության ներգրավում և իրազեկության բարձրացում • Իրավական և օրենսդրական կանոնակարգեր • Հանքարդյունաբերության

[15] Հ18
[16] Հ17
[17] Հ19

հարցեր (մոտ 15 օր) • Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (մոտ 5 օր) • Հանրության ներգրավում և իրազեկության բարձրացում • Թափանցիկություն	• Մարզպետարանի քննարկումները համապատասխան մարմինների և ակադեմիայի հետ (մոտ 1 շաբաթ)	ոլորտում միջազգային առաջավոր փորձը • Թափանցիկություն • Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Մարտահրավերներ և լուծումներ

Պետական մարմիններում շահագրգիռ կողմերը շեշտել են հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված հետևյալ խնդիրները Հայաստանում:

Աղյուսակ 12. Պետական կառույցների նշած խնդիրները հանքարդյունաբերության ոլորտում[18]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Ներդրումների պակաս • Օգտակար հանածոների պակաս • Փորձառության պակաս • Սարքավորումներից օգտվելու հնարավորության բացակայություն • Ենթակառուցվածքների բացակայություն • Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պակաս • Օրենքների վատ կիրարկում	• Ներդրումների պակաս • Օգտակար հանածոների պակաս • Փորձառության պակաս • Սարքավորումներից օգտվելու հնարավորության բացակայություն • Ենթակառուցվածքների բացակայություն • Չափից շատ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր • Հանքային պաշարների կորզումը և մշակումն ուղեկցվում են մեծ ծավալով թափոնների և արտազատումների առաջացմամբ , որոնք ազդում են մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա	• Ներդրումների պակաս • Փորձառության պակաս • Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի բացակայություն • Օրենքների վատ կիրարկում

Պետական շահագրգիռ մարմինների կարծիքը հանքարդյունաբերության ոլորտում օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ կապված ներկայացված են Աղյուսակ 13-ում:[19]

[18] Հ22
[19] Հ23

Աղյուսակ 13. Պետական մարմինների կարծիքն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համապատասխանության մասին

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Հանքարդյունաբերական ոլորտում օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավարար են • Հանքարդյունաբերական ոլորտում օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավականաչափ խիստ չեն	• Օրենքները մշտապես կարիք ունեն բարեփոխման	• Հանքարդյունաբերական ոլորտում օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավարար են • Հանքարդյունաբերական ոլորտում օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավականաչափ խիստ, չեն

Պետական հաստատությունների կողմից նշված քայլերը՝ ուղղված հանքարդյունաբերության ոլորտում արդի բնապահպանական և սոցիալական պատասխանատվության ստանդարտների ապահովմանը, բերված են Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Ձեռնարկվելիք քայլերն ըստ պետական կառույցների կարծիքի[20]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Աղտոտման մասին տեղեկացման պարտավորությունները պետք է խստացվեն • Ֆինանսական հաշվետվությունների մասին պահանջները պետք է խստացվեն • Բոլոր չափանիշները պետք է ավելի խստացնել	• Բոլոր չափանիշները պետք է ավելի խստացնել	• Արտոնատրման պահանջները պետք է խստացվեն • Աղտոտման մասին տեղեկացման պարտավորությունները պետք է խստացվեն • Բոլոր ստանդարտները պետք է ավելի խստացնել

Պետական մարմինների հետագա ծրագրերը հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված ներկայացված են Աղյուսակ 15-ում:

[20] Հ24

Աղյուսակ 15. Պետական մարմինների հետագա ծրագրերը[21]

Կենտրոնական մարմիններ	Մարզային մարմիններ	Տեղական մարմիններ
• Ծրագրերի և ռազմավարությունների իրականացում համապատասխան ենթաօրենսդրական ակտեր ընդունելու միջոցով • Համագործակցություն համապատասխան իրավական և ֆիզիկական անձանց հետ • Իրավական դաշտի բարելավում նոր ներդրումներ գրավելու նպատակով • Բնապահպանական մոնիթորինգի և համաճարակաբանական ուսումնասիրությունների իրականացում՝ բացահայտելու ոչ վարակիչ հիվանդությունների վտանգի պատճառական կապերը • Ավելի մեծ թվով պատշաճ աշխատատեղերի ստեղծում և անվտանգ շահագործման ապահովում • Հանքարդյունաբերության ոլորտում անվտանգության աստիճանի մեծացում • Համագործակցություն կենտրոնական և մարզային պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ	• Քանի որ հանքաքարի կորզումն ու մշակումն ուղեկցվում են մեծ քանակությամբ արտանետումների և թափոնների առաջացմամբ, որոնք ազդում են շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա, առաջնահերթ է արտազատումների քննությունը տարրերի մշակման միջոցով բացասական ազդեցությունը դրական արդյունքի վերածելու համար: Կան որոշակի հնարավորություններ, սակայն բացակայում է համագործակցային աշխատանքը համապատասխան մասնագետների և կազմակերպությունների միջև: Մարզպետարանը համագործակցում է ԵՊՀ-ի և այլ գիտական խմբերի հետ խնդիրները լուծելու համար	• Հանքահանման գործընթացի վերահսկողություն

2.2. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

Թվով 7 գիտական հաստատություններից 5-ը, որոնց առաջարկվել էր մասնակցել հարցմանը, լրացրել են հարցաթերթը: Պատասխանողներից երկուսին՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարան և Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետ, ներկայացրել են երկու գիտնական յուրաքանչյուրից:

[21] Հ25

Գիտական հաստատություններից ստացված պատասխանները բերված են ստորև:

Ընդհանուր նկարագիր. կարողություններ

Աղյուսակ 16-ում բերված են պատասխանած գիտական հաստատությունների ցանկը և հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված նրանց համապատասխան աշխատանքները:

Աղյուսակ 16. Գիտական հաստատություններն ըստ իրենց աշխատանքների[22]

Գիտական հաստատություններ և համալսարաններ	Աշխատանքներ
ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն	• Բնապահպանական և սոցիալական գնահատում • Հետազոտություն
ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ	• Հետազոտություն
ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ	• Ջրային էկոհամակարգերի և համապատասխան կենսաբազմազանության վրա հետևանքների (ազդեցության) գնահատում
Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետ	• Բնապահպանական և սոցիալական գնահատում • Հետազոտություն • Ուսուցում • Խորհրդատվություն
Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ	• Արդյունահանման ոլորտի բնապահպանական և սոցիալական գնահատում • Հետազոտություն
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	• Հետազոտություն

Վերոնշյալ գլխավոր շահագրգիռ կողմերն աշխատում են Հայաստանում[23] հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված հարցերի ուղղությամբ ավելի քան 5 տարի[24]: Պատասխանողները հայտնել են, որ հանքարդյունաբերությունը չունի որևէ ուղղակի ազդեցություն իրենց կազմակերպությունների վրա: Սակայն, որոշները շեշտել են հանքարդյունաբերության բացասական ազդեցության մասին շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա:[25]

[22] Հ1
[23] Հ3
[24] Հ4
[25] Հ2

Գիտական հաստատություններում այդ ոլորտի հետ կապված աշխատող մարդկանց վերաբերյալ հարցին երկու հաստատությունները նշել են 2-10 մարդ, երեքը՝ 11-20 և մեկը՝ 20-50:[26]

Հարցաթերթը լրացնող գիտական հաստատությունների մասնագիտացման բնագավառները հետևյալն են՝[27]

- Շրջակա միջավայրի պահպանություն,
- Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզում,
- Հանքային պաշարների գնահատում,
- Գործընթացի վերահսկողություն (մոնիթորինգ),
- Իրավապահպանություն,
- Քաղաքացիական ներգրավվածություն որոշումների կայացման մեջ,
- Մարդու իրավունքներ,
- Ջրի որակի փոփոխության քննություն ջրային էկոհամակարգերում և կենդանական աշխարհի առնչությամբ

Պատասխանող հաստատություններից ոչ մեկը չունի որևէ կայացած մեխանիզմ հանքարդյունաբերական գործունեությունը մշտական վերահսկողության տակ պահելու համար:[28]

Հաստատություններն օգտագործում են իրենց կադրային ռեսուրսները, տեխնիկական սարքավորումը և լրատվամիջոցների հետ կապը հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հարցերի լուծման և աշխատանքների իրականացման համար:[29]
Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ համաձայն պատասխանողների հայտնածի, գիտական հանրության համար հանքարդյունաբերության մասին տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրներն ըստ կարևորության հետևյալն են՝[30]

- Միջազգային և տեղական ՀԿ-ների զեկույցները, համացանցային կայքէջերը,
- ՀՀ կառավարությունը,
- Գիտական աշխատություններն ու հանքագործական ընկերությունների հաշվետվությունները, կայքէջերը,
- Պատվիրված ուսումնասիրությունները, զեկույցները,
- Մարզային լրատվամիջոցները,
- Համապետական լրատվամիջոցները,
- Միջազգային լրատվամիջոցները,
- Տեղական ինքնակառավարման մարմինները:

[26] Հ6
[27] Հ5
[28] Հ13
[29] Հ16
[30] Հ20

Պատասխանող հաստատություններից երկուսը շեշտել են, որ չկան պատվիրված ուսումնասիրություններ, զեկույցներ և (կամ) անհրաժեշտ տեղեկատվությունը մատչելի չէ:

Գիտական հաստատությունների կողմից կիրառված հասարակության հետ կապերի եղանակների թվում են՝ [31]

- Համապետական ԶԼՄ հաղորդագրությունները,
- Մարզային ԶԼՄ հաղորդագրությունները,
- Տեղական համայնքային հանդիպումները,
- Համացանցը,
- Հաստատությունների կայքէջերը:

Գիտական հաստատությունների հիմնական թիրախային խմբերի թվում նշվել են ՀՀ կառավարությունը, հանքագործական ընկերությունները, տեղի բնակչությունը, ՀԿ-ները և հանքարդյունաբերության հետևանքներն ուսումնասիրող գիտնականները:[32]

Աղյուսակ 17-ում բերված է այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ գիտական հաստատությունները համագործակցում են, ինչպես նաև համագործակցության բնագավառները:[33]

Աղյուսակ 17. Կազմակերպությունները և համագործակցության բնագավառները

Կազմակերպություններ	Ուղղություններ
• Միջազգային կազմակերպություններ	• Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրություններ
• Համապատասխան նախարարություններ և մարզպետարաններ	• Հանքարդյունաբերության վերաբերյալ առաջարկություններ նախարարություններին • Հանքերի երկրաբանական հետախուզություն • Հանքագործություն • Շրջակա միջավայրի պահպանություն • Բնական պաշարների արդյունավետ կառավարում
• ՀԿ-ներ, Օրհուս կենտրոններ	• Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ կառավարում • Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերական գործունեության հետևանքների գնահատում

[31] Հ11
[32] Հ7
[33] Հ8

Գիտական հաստատություններից մեկը բողոքել է, որ համագործակցությունը սովորաբար միակողմանի է և կայանում է հիմնականում իրենց նախաձեռնությամբ:

Խնդիրներ և կարիքներ

Աղյուսակ 18-ում ամփոփ ներկայացված են այն հարցերը, որոնց բախվում են գիտական հաստատությունները հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված իրենց աշխատանքում, այդ թվում հայտնաբերված խնդիրների հնարավոր լուծումները:

Աղյուսակ 18. Խնդիրներ, որոնց բախվում են գիտական հաստատությունները, և դրանց հնարավոր լուծումները

Խնդիրներ, հարցեր[34]	Լուծումներ[35]
• Հանքավայրերի շահագործման մասին տեղեկություններն ու երկրաբանական տվյալներն առավելապես գաղտնի են և հաճախ ոչ մատչելի կամ խիստ թանկ գիտնականների համար • Գիտական հաստատությունների կողմից արված առաջարկությունները գլխավորապես մերժվում են կամ չեն կիրառվում • Համագործակցությունը Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Ընդերքի վարչության և հանքարդյունաբերական ընկերությունների հետ ցածր մակարդակի վրա է • Ուսումնասիրությունների արդյունքում որոշ հանքավայրերի տարածքում հայտնաբերվել են վտանգված տեսակներ, ուստի արվել են գործունեությունը դադարեցնելու կամ ծրագիրը փոփոխության ենթարկելու առաջարկություններ, որոնք, սակայն, հաշվի չեն առնվել • Կառավարության պատրաստակամության բացակայությունը՝ հաշվի առնելու կառավարությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող առաջարկությունները • Հանքարդյունաբերական ընկերությունների	• Մեծացնել թափանցիկության աստիճանը՝ ստեղծելով մեխանիզմներ օրենսդրության կիրառման համար • Մեծացնել հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատվությունը հասարակության առջև • Մեծացնել երկրաբանական ուսումնասիրությունների, հանքագործության և բնության պահպանության հետ կապված աշխատանքների թափանցիկությունը և հաշվետվողականությունը • Վերջ տալ հանրային լսումներ նմանակելուն և փորձագիտական եզրակացություններին զուգահեռ հարցնել հարգված գիտական հաստատությունների կարծիքը • Անդրադառնալ ձեռնարկված գիտական ուսումնասիրություններին • Դրսևորել քաղաքական կամք՝ ստեղծելու իրավական և կիրարկման մեխանիզմներ, որպեսզի ապահովվի կայուն և պատասխանատու հանքարդյունաբերության թափանցիկությունը, բնապահպանական վերահսկողության ծրագրերի և մոնիթորինգի

[34] Հ9
[35] Հ10

կողմից տեղական փորձագետներին հանքավայրերի հետախուզման, ծրագրերի նախագծման մեջ և այլն չներգրավելը և ուսանողների գիտելիքներն ու կարողությունը խթանելու համար ուսումնական պրակտիկա անցկացնելու պատրաստակամության բացակայությունը	իրականացումը

Կարողությունների հզորացման և հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված իրենց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով գիտելիքների ավելացման նպատակով գիտական հաստատությունները նշել են, որ կարիք ունեն՝[36]

- Վերապատրաստման
- Գործնական փորձի
- Մասնագիտական խորհրդատվության
- Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկտավությունից օգտվելու հնարավորության:

Այս ոլորտի հետ կապված հարցերի ուղղությամբ ավելի արդյունավետ աշխատելու նպատակով անհրաժեշտ է հետևյալ մասնագիտական (տեխնիկական) աջակցությունը՝[37]

- Տեղեկություններ, տվյալներ,
- Պատասխանատվություն, լիազորություններ
- Սարքավորում,
- Ֆինանսավորում:

Վերապատրաստման թեմաները, որոնք գիտական հաստատությունների ներկայացուցիչները նշել են որպես անհրաժեշտ, հետևյալն են՝[38]

- Իրավական և ենթաօրենսդրական դաշտ (մոտավորապես 1 շաբաթ),
- Միջազգային առաջավոր փորձը հանքարդյունաբերության ոլորտում (մոտ 1 շաբաթ),
- Բաց և փակ հանքավայրերի շահագործման բնապահպանական հետևանքները (մոտավորապես 10 օր),
- Հայաստանում հանքարդյունաբերական ընկերությունների բնապահպանական և սոցիալական պատասխանատվության հետ կապված միջոցառումների ներածություն, այդ թվում՝ դրական փորձը և թերությունները՝ ուղեկցված տեղայցերով (12-16 ժամ):

[36] Հ18
[37] Հ17
[38] Հ19

Մարտահրավերներ և լուծումներ

Գիտական հանրության ներկայացուցիչները Հայաստանում օգտակար հանածոների կառավարման ոլորտի հետ կապված նշել են հետևյալ խնդիրները՝

- Ներդրումների պակաս,
- Օգտակար հանածոների պակաս,
- Փորձառության պակաս,
- Սարքավորումներից օգտվելու հնարավորության բացակայություն,
- Ենթակառուցվածքների բացակայություն,
- Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պակաս,
- Օրենքների վատ կիրարկում,
- Պետության կողմից վատ կառավարում և մասնակցություն,
- Հանքարդյունաբերության և հանքավայրերի շահագործման ոլորտում պետական ռազմավարության հետ կապված որոշումների կայացման հստակ չափանիշների բացակայություն,
- Օգտակար հանածոների պաշարների մասին որպես հանրության սեփականության մտածողության բացակայություն,
- Շահագործման տեխնոլոգիական այլընտրանքների անտեսում,
- Պետության կողմից վատ վերահսկողություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պահանջների և շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի իրականացման նկատմամբ,
- Հանքավայրերի շահագործման մասին որոշումներ կայացնելու գործընթացում բնապահպանական հետևանքների ֆինանսական ծախսերի անտեսում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության ոչ ճիշտ գնահատում և պետության կողմից բնապահպանական գնահատումների սուբյեկտիվ բնույթ,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման ուղեցույցների բացակայություն,
- Միջազգային չափանիշներին հետևելու մեխանիզմների բացակայություն,
- Հետևողական վերահսկողության բացակայություն,
- Հանրային շահի անտեսում:

Գիտական հանրության ներկայացուցիչների դիտողությունները հանքարդյունաբերության ոլորտի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին հետևյալն են՝ [39]

- Օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավարար են,
- Օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավականաչափ խիստ չեն
- Հանքարդյունաբերության օրենսգրքում կան հակասական դրույթներ,
- Հանքարդյունաբերության օրենսգրքի կիրակումն ապահովելու հիմքերն ու մեխանիզմները թույլ են: Մասնավորապես, բացակայում են օգտակար հանածոների

[39] Հ23

ողջամիտ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի իրականացումն ապահովող մեխանիզմները,
- Շրջակա միջավայրի և առողջության վրա հետևանքները հաճախ անտեսվում են:

Գիտական հաստատությունները նշել են մի շարք քայլեր, որոնք պետք է ձեռնարկել ապահովելու համար արդի չափանիշների ներդրումը շրջակա միջավայրի պահպանության և պատասխանատու հանքարդյունաբերության կառավարման ոլորտում, այդ թվում՝[40]

- Պետք է խստացնել բոլոր պահանջները,
- Պետք է խստացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սչափանիշները,
- Պետք է խստացնել արտոնատրման պահանջները և հաստատել վերահսկողություն՝ ապահովելու արտոնագրի պայմանների կատարումը,
- Աղտոտման մասին տեղեկացման պահանջները պետք է խստացվեն, դարձվեն ավելի թափանցիկ և հրապարակային,
- Ֆինանսական հաշվետվությունների չափանիշները պետք է խստացվեն, դարձվեն ավելի թափանցիկ և հրապարակային,
- Պետք է խստացնել անվտանգության կանոնակարգերը ոլորտում գործող ընկերությունների համար և հաստատել վերահսկողություն դրանց կատարումն ապահովելու նպատակով,
- Օգտակար հանածոները պետք է օգտագործվեն ողջամտորեն՝ թափոնները նվազագույնի հասցնելով և ավելացնելով օգտակար նյութերի կորզման ծավալը,
- Պետական մարմինները պետք է լինեն հետևողական և պահանջեն պայմանագրի մեջ նշված նախագծային սահմանաչափերի պահպանումը,
- Պետք է մշակվեն ուղեցույցներ՝ անցկացնելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում հանքարդյունաբերության ոլորտում,
- Պետք է մշակել չափանիշներ հանքարդյունաբերության ոլորտում պետական բնապահպանական փորձագիտության դրական եզրակացություններ տրամադրելու համար,
- Արտոնագրերը պետք է տրամադրվեն միայն այն ընկերություններին, որոնք ապահովում են հանքահանման գործընթացների բնապահպանական մոնիթորինգը, այդ թվում նրանց, որոնք կիրառում են միջազգային առաջավոր փորձը պոչամբարների անվտանգության և թափոնների վերամշակման համար,
- Պետք է խստացնել աղտոտման վերաբերյալ տվյալների, տեղեկատվության հիմնավորման պահանջները,
- Պետք է մեծացնել ֆինանսական հաշվետվությունների թափանցիկությունը և մատչելիությունը,
- Անվտանգության, առողջության և սոցիալական պատասխանատվության չափանիշները պետք է համապատասխանեցվեն միջազգային նորմերին,
- Գիտական հետազոտությունների եզրակացությունները պետք է լինեն օբյեկտիվ,

[40] Չ24

- Պետք է ուժեղացնել կոռուպցիայի դեմ պայքարը:

Հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված իրենց հետագա ծրագրերի առումով, գիտական հաստատությունները ցուցաբերել են կառավարության, ՀԿ-ների և հանքարդյունաբերական ընկերությունների հետ համագործակցելու հետաքրքրություն:[41]

2.3. ՏԵՂԱԿԱՆ ՀԿ-ՆԵՐ

Ընդհանուր նկարագիր. կարողություններ

Վերլուծությանը մասնակցելու հրավեր ստացած 16 ՀԿ-ներից հարցաթերթին պատասխանել են 10-ը: Այս 10 կազմակերպություն ներառող խմբից Համահայկական բնապահպանական ճակատը և Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը գրանցված միություններ չեն: Եվս երկուսը՝ Օրհուս կենտրոնները Ալավերդիում և Կապանում, հիմնվել են համաձայն Բնապահպանության նախարարության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև Փոխըմբռնման հուշագրի:

Աղյուսակ 19-ում բերված է պատասխանող ՀԿ-ների ցանկը, դրանց համապատասխան գործունեությունը և հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված աշխատանքային փորձը:

Աղյուսակ 19. ՀԿ-ներն ըստ իրենց գործունեության և աշխատանքային փորձի

Տեղական ՀԿ-ներ	Գործունեություն[42]	Տևողություն[43]
Ալավերդու Օրհուս կենտրոն	• Հետազոտություն • Բնապահպանական և սոցիալական գնահատում	• 1-5 տարի
Համահայկական բնապահպանական ճակատ	• Բնապահպանական և սոցիալական գնահատում • Փորձագետների միջոցով վերլուծությունների կատարում • Այցեր հանքարդյունաբերության ազդեցությունը կրած տեղանքներ և հետազոտություններ, խախտումների հայտնաբերում • Պետական մարմինների և հանքավայրերի օգտատերերի հարցումներ, տեսանյութերի հրապարակում, վերլուծական	•1-5 տարի

[41] Հ25
[42] Հ1
[43] Հ4

	հոդվածների պատրաստում	
Հայ բնապահպաններ և իրավաբաններ	• Բնապահպանական հարցեր /Կառավարում • Բնապահանական և սոցիալական գնահատում	• Ավելի քան 10 տարի
Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա	• Հանքարդյունաբերական ոլորտի բնապահպանական և սոցիալական գնահատում	• Ավելի քան 10 տարի
Թռչնասերների կենտրոններ	• Բնապահպանական և սոցիալական գնահատում	• Ավելի քան 10 տարի
Էկոէռա	• Բնապահպանական ակտիվ գործունեություն, քննադատություն, հանրության իրազեկում, օրենքների կիրարկում	• 1-5 տարի
Էկոլուր	• Բնապահպանական և սոցիալական գնահատում	• Ավելի քան 10 տարի
Բնապահպանական իրավունքներ	• Հետազոտություն	• 1-5 տարի
Կապանի Օրհուս կենտրոն	• Բնապահպանական և բնության պահպանության հետ կապված այլ հարցերի վերաբերյալ տվյալների հավաքում և տարածում	• Ավելի քան 10 տարի
Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն	Այլ • Հանրային իրազեկում • Շահերի պաշտպանություն • Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված քարոզարշավների, բնապահպանական շարժումների, հանրային միջոցառումների կազմակերպում	• 5-10 տարի

Կապանի Օրհուս կենտրոնը և Ալավերդու Օրհուս կենտրոնը գործում են Սյունիքի մարզում և Լոռու մարզում համապատասխանաբար, մինչդեռ մյուսները գործունեություն են իրականացնում Հայաստանի տարածքում և զբաղվում են համերկրային նշանակության հարցերով:[44]

ՀԿ-ների վրա հանքարդյունաբերության ոլորտի ներգործության հետ կապված պատասխանողները շեշտել են դրա բացասական հետևանքները առողջության, շրջակա

[44] Հ3

միջավայրի, գյուղատնտեսության և Հայաստանում սոցիալ-տնտեսական վիճակի վրա և ոչ թե որևէ անմիջական ազդեցություն իրենց կազմակերպությունների վրա: ՀԿ-ները մտահոգություն են հայտնել տնտեսության՝ հանքարդյունաբերությունից վտանգավոր կախվածության, արտոնատրման գործում կոռուպցիայի և այլ խնդիրների մասին:[45]

Պատասխանած ՀԿ-ները նշել են, որ հանքարդյունաբերության հետ կապված հարցերով զբաղվում են 1-ից մինչև 10 մարդ: Համահայկական բնապահպանական ճակատ քաղաքացիական նախաձեռնությունը նշել է 20-50 մարդ, իսկ Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը նշել է մոտավորապես 8000 մարդ՝ հղում անելով անդամակցությանը նախաձեռնության համացանցային կայքէջում:[46]

Պատասխանող ՀԿ-ների գիտելիքն ու փորձը օգտակար հանածոների կառավարման հարցերի առումով ներառում է՝

- Մոնիթորինգ,
- Շրջակա միջավայրի պահպանություն,
- Իրավապահպանություն, օրենքի կիրարկում,
- Մարդու իրավունքներ,
- Հանրության ներգրավվածություն որոշումների կայացման գործընթացում
- Հանրային լսումներ:

ՀԿ-ների կողմից կիրառվող վերահսկողական մեխանիզմներն են՝[47]

- Օրենսդրության և փաստաթղթերի ուսումնասիրություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղայցեր,
- Պարբերական այցեր հանքարդյունաբերության ազդակիր տեղանքներ, քննություն, նմուշառում, հանրային տեղեկատվության և ներակայացման վերլուծություն, հարցումներ և հակաիրավական գործողությունների մասին ազդարարում,
- Հանրության ակտիվ ներգրավում վերահսկողության գործընթացում,
- Վերահսկողություն՝ ներգրավելով կամավորներ, անկախ փորձագետներ և այլն,
- Դիտումներ, գրագրություն համապատասխան մարմինների հետ, հարցազրույցներ, անկախ փորձագիտական գնահատումներ, համեմատական վերլուծություններ և քննարկումներ:

Հանքարդյունաբերության հետ կապված հարցերով զբաղվելու և աշխատանքներն իրականացնելու համար ՀԿ-ների կողմից օգտագործվող միջոցների թվում են՝[48]

- Կադրային ռեսուրսներ (բնապահպան տնտեսագետներ, իրավաբաններ և այլ մասնագետներ, կամավորական խմբեր),

[45] Հ2
[46] Հ6
[47] Հ13
[48] Հ16

- Տեխնիկական կարողություններ (տեղեկատվական աղբյուրներ, ինչպես օրինակ՝ տեղեկագրեր, կայքեր, փորձագետների տվյալների բազա, արբանյակային հեռակառավարմամբ զոնդավորում, Աշխարհագրական տեղեկատվական համակարգի համակարգչային ծրագիր, ճառագայթման հայտնաբերման սարքեր),
- Հանրային քննարկումներ, սեմինարներ,
- Զանգվածային լրատվամիջոցների ներգրավում:

ՀԿ-ների համար տեղեկատվության հիմնական աղբյուրներն ըստ կարևորության հետևյալն են՝[49]

- ՀՀ կառավարությունը,
- Համապետական լրատվամիջոցները,
- Միջազգային և տեղական ՀԿ-ների հաշվետվությունները, կայքէջերը,
- Տեղական ինքնակառավարման մարմինները,
- Պատվիրված ուսումնասիրությունները, զեկույցները,
- Գիտական աշխատությունները,
- Մարզային լրատվամիջոցները,
- Հանքարդյունաբերական ընկերությունների հաշվետվությունները, կայքերը,
- Միջազգային լրատվամիջոցները:

ՀԿ-ներից մեկը նշել է նաև սոցիալական լրատվամիջոցները, շահագրգիռ քաղաքացիներից ստացված արտակարգ իրավիճակների մասին տեղեկացնող հեռախոսազանգերը, անձնական կապերը, համաժողովները, քննարկումները և ծրագրերը: Մեկ այլ ՀԿ ասել է, որ տեղական ինքնակառավարման մարմինները չեն տիրապետում համապատասխան տեղեկատվության, և որ հանքարդյունաբերական ընկերությունները չունեն համացանցային կայքեր, և նույնիսկ նրանք, որոնք ունեն, չեն պարունակում բավարար տեղեկություններ:

Տեղական ՀԿ-ների կողմից կիրառված հասարակության հետ կապերի եղանակներն են՝[50]

- Համապետական լրատվամիջոցների հաղորդագրություններ,
- Մարզային լրատվամիջոցների հաղորդագրություններ,
- Տեղական համայնքային ժողովներ,
- Միջազգային լրատվամիջոցներ,
- Համալսարաններ,
- Սոցիալական ցանցեր:

ՀԿ-ների թիրախային խմբերն են՝[51]

- Տեղական ինքնակառավարման մարմիններ,

[49] Հ20
[50] Հ11
[51] Հ7

- Կենտրոնական կառավարական մարմիններ,
- Տեղի բնակչություն,
- Հանքարդյունաբերական ընկերություններ,
- ՀԿ-ներ,
- Տեղական գործարարություն,
- Գյուղատնտեսությամբ զբաղվողներ,
- Զբոսաշրջիկներ:

Աղյուսակ 20-ում բերված է այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ՀԿ-ները համագործակցում են արդեն նշված ոլորտներում:[52]

Աղյուսակ 20. Կազմակերպություններ և ՀԿ-ների համագործակցության ուղղություններ

Կազմակերպություններ	Ուղղություններ
• Բնապահպանական, տնտեսական, հակակոռուպցիոն, մարդու իրավունքների ՀԿ-ներ (այդ թվում Հանրային բնապահպանական դաշինքը, տեղական և միջազգային)	• Ընդհանուր բնապահպանական հարցեր, մոնիթորինգ, ծրագրեր
• Կառավարություն, նախարարություններ, Ազգային ժողովի աշխատակազմը, մարզպետարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ	• Տեղեկատվության մատչելիություն • Իրավական կանոնակարգեր • Քննարկումներ
• Միջազգային կազմակերպություններ	• Հանրային իրազեկման միջոցառումներ, • Իրավապահպանության մեխանիզմների մշակում, • Բնապահպանական քաղաքականության վերլուծություն • Համայնքների հետ աշխատանք
• Գիտական հաստատություններ (ԳԱԱ ինստիտուտներ, Հայաստանի ամերիկյան համալսարան)	• Փորձագիտական գնահատումներ • Լաբորատոր քննություն
• Հանքարդյունաբերական ընկերություններ	• Տեղեկատվության մատչելիություն, • Քննարկումներ և այլն
• Զանգվածային լրատվամիջոցներ	• Իրազեկության բարձրացում

Խնդիրներ և կարիքներ

[52] Հ8

Աղյուսակ 21-ում ամփոփ բերված են այն հարցերը, որոնց ՀԿ-ները բախվել են հանքագործության հետ կապված թեմաների ուղղությամբ աշխատելիս, ինչպես նաև այդ հարցերի հնարավոր լուծումները: ՀԿ-ների առանձնացրած խնդիրների և հնարավոր լուծումների մեծ մասն ավելի շատ կապված է Հայաստանի քաղաքացիների վրա ներազդող ընդհանուր դժվարությունների հետ, քան թե հենց իրենց՝ կազմակերպությունների հետ:

Աղյուսակ 21. ՀԿ-ների կողմից հանդիպած խնդիրները և լուծումներ

Խնդիրներ, հարցեր[53]	Լուծումներ[54]
• Կարողությունների ընդհանուր պակաս • Բնապահպանական և իրավական հարցերի մասին հանրային իրազեկության ցածր աստիճան • Տեղական համայնքների իրազեկության ցածր աստիճան • Լավ զարգացած քաղաքական մշակույթի շրջանակում գործող կազմակերպված քաղաքացիական հասարակության բացակայություն • Պետական հաստատությունների կողմից որոշակի հարցերի շուրջ հրապարակված տեղեկատվության բացակայություն • Պետական բնապահպանական ստուգման (փորձաքննության) ձևական բնույթը և ոչ պրոֆեսիոնալ գործելակերպը • Համապատասխան մարմինների կողմից վերահսկողության	• Սոցիալական խնդիրների հաղթահարում • Տեղեկատվության և վերապատրաստման հնարավորությունների ավելացում • Ոլորտի համապարփակ ռազմավարության մշակում՝ հիմնված եկամուտների և շրջակա միջավայրի տնական վնասի իրական և գիտականորեն հիմնավորված գնահատման վրա • Պաշարների օգտագործման և բնապահպանական վճարների համակարգի վերանայում և հարկերի, այլ վճարների ու տուգանքների մեծացում • Պոչամբարների դասակարգում ըստ իրենց ներկայացված վտանգի և թափոնների հարկման ներմուծում • «Աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրառում՝ ըստ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչներին հասցված վնասի • Ջրի շրջանառության համակարգերի ներդրում հանքաքար մշակող բոլոր գործարաններում և պոչամբարներում՝ բացառելու թափոնները շրջակա միջավայր արտանետելու հավանականությունը՝ սահմանելով վերահսկողություն արտանետման վայրերում, անցկացնելով պարբերական նմուշառում և հետազոտություններ • Բոլոր գործող և կոնսերվացված պոչամբարներում անվտանգության հետ կապված ուսումնասիրությունների անցկացում և ամբարտակների ամրության գնահատում արտակարգ իրավիճակների դեպքերում, ինչպես օրինակ՝ երկրաշարժը, սողանքը, ջրհեղեղը • Պետական և հանրային խիստ վերահսկողության

[53] Հ9
[54] Հ10

բացարձակ բացակայություն • Ակնհայտ խախտումներին արձագանքի բացակայություն • Պետական կազմակերպությունների անգործությունը հանքարդյունաբերական ընկերությունների անօրինական գործողությունների դեպքում • Փորձագետների ներգրավվածության ցածր աստիճանը • Լուրջ գիտական հետազոտությունների պակաս • Կառավարման համակարգում ճիշտ որոշումներ կայացնելու ունակ պաշտոնյաների պակաս • Կոռուպցիա դատական և պետական հաստատություններում • Հանրության ակտիվ մասնակցության պակաս սոցիալական խնդիրների պատճառով • Միջազգային ֆինանսական հաստատությունների ռազմավարությունները, որոնք մի կողմից հանգեցնում են բնապահպանական աղետների, իսկ մյուս կողմից ծառայում են ընկերությունների շահերին՝ առանց խթանելու Հայաստանի տնտեսական զարգացումը • Ոչ ճիշտ կառավարումը • Կոռումպացված հանքարդյունաբերական ընկերություններ (գրեթե	հաստատում հանքագործության բոլոր փուլերում, մոնիթորինգի արդյունքների հրապարակում՝ համաձայն ընկերությունների շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի • Հանքարդյունաբերության ամբողջ ժամանակահատվածում ազդակիր բնակչության առողջական վիճակի քննություն և տվյալների հրապարակում • Նոր հանքավայրերի շահագործման փոխարեն անցկացնել տնտեսական գնահատում և պոչամբարներում պարունակվող տարբեր տարրերի կորզում, ինչը կարող է լինել ավելի շահավետ ու նվազ վտանգավոր, քան այնպիսի հանքավայրերի շահագործումը, ինչպիսիք են Թեղուտը կամ Ամուլսարը • Կորզման արդյունավետության բարձրացում, հատկապես հիմնական մետաղների, ինչպես նաև այլ օգտակար և թանկարժեք տարրերի կորզումը մեծացնելու միջոցով, մինչև 90-95% ներկայիս 65-70%-ի դիմաց • Հիմնադրամի ստեղծում, որին հանքարդյունաբերական ընկերությունները կվճարեն զգալի դրամական միջոցներ, որոնք կօգտագործվեն շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանման, աղտոտված տարածքների վերականգնման, հնարավոր վթարների հետևանքների վերացման և գիտական օբյեկտիվ հետազոտությունների անցկացման համար • Բարձրացնել Հայաստանում կենսամակարդակը արտագաղթը դանդաղեցնելու նպատակով, հանքարդյունաբերության ոլորտում վարել զուսպ քաղաքականություն՝ հաշվի առնելով ներկա և ապագա կարիքները ավելի խստապահանջ բնապահպանական և հարկային պայմաններ սահմանելու միջոցով, վերականգնել արդարությունը և փակել ապօրինի հանքավայրերը • Ապահովել ճիշտ կառավարման սկզբունքների կիրառումը, օրենսդրության բարեփոխումներ, փորձագետների բարձր որակը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդաբանությունները, պետական և հանրային վերահսկողությունը, օֆշորային ընկերությունների

բոլոր տեղանքները գրանցված են օֆշորային գոտիներում) • Օրենքների թերությունները • Բնապահպանական վնասների տնտեսական գնահատման մեխանիզմների բացակայություն • Առողջապահական խնդիրներ • Աղքատություն • Օգտակար հանածոների պաշարները Հայաստանում չեն շահագործվում, այլ կողոպտվում են, այդ թվում Թեղուտի անտառը: Անտառները բնական պաշար չեն համարվում, մինչդեռ գետնի տակ գտնվող մետաղներն ու օգտակար հանածոներն այդպիսիք համարվում են	հաշվետվողականությունը և նման ընկերությունների համար Հայաստանում գործելու սահմանափակումները • Այն պատկերացման ձևավորում, որ մետաղական պաշարները մեկ օր կսպառվեն և որ անհրաժեշտ է դրանց շահագործումից ստացված եկամուտը ծախսել Հայաստանի և տնտեսության մյուս ոլորտների ուժեղացման վրա և ոչ թե օֆշորային գրանցում ունեցող ընկերությունների և մի քանի ընտանիքների հարստացման վրա

Պատասխանողներից մեկն ասել է, որ լուծումները կիրականացվեն միայն այն ժամանակ, երբ Հայաստանը կունենա արհեստավարժ ղեկավարություն, որը մտահոգված կլինի երկրի ապագայով և կունենա ճիշտ որոշումներ կայացնելու պատրաստակամություն և ունակություն:

Օգտակար հանածոների կառավարման ուղղությամբ ավելի արդյունավետ աշխատելու համար ՀԿ-ները նշել են վերապատրաստումների, խորհրդատվությունների և գործնական փորձի կարիքը:[55]

Օգտակար հանածոների կառավարման ոլորտի հետ կապված հարցերով ավելի արդյունավետ զբաղվելու համար ՀԿ-ների կողմից նշված տեխնիկական աջակցության կարիքները ներառում են՝ [56]

- Աշխատողների կարողությունների հզորացում,
- Սարքավորումներ (լաբորատոր պարագաներ քննությունների համար, հայտնաբերման սարքեր),
- Տեղեկություններ, տվյալներ

[55] Հ18
[56] Հ17

- Պատասխանատվություն, լիազորություն:

Թեմաները, որոնց շուրջ ՀԿ-ները կցանկանային վերապատրաստվել, հետևյալն են՝[57]

- Իրավական և կանոնակարգային հարցերի մասին պատկերացում (6-8 ժամ),
- Հանքարդյունաբերական գործունեության ոլորտում միջազգային առաջավոր փորձը (4-6 ժամ),
- Թափանցիկություն (1-2 ժամ),
- Ընկերությունների սոցիալական պատասխանատվություն (1-2 ժամ),
- Հողի և օգտակար հանածոների սեփականություն (2-4 ժամ),
- Հանրության ներգրավում և իրազեկության բարձրացում,
- Պոչամբարների կառավարում, հողերի ռեկուլտիվացիա, հանքերի փակում (տևողության ժամանակահատվածը տրամադրված չէ)
- Այլ երկրների հարկման համակարգերի, բնօգտագործման և բնապահպանական վճարների, ռոյալթիների հեմամատական վերլուծություն (տևողության ժամանակահատվածը տրամադրված չէ)
- Միջազգային ֆինանսական կառույցների և հանքարդյունաբերական կազմակերպությունների գործունեության վերլուծություն (տևողության ժամանակահատվածը տրամադրված չէ)
- Արմատական ակտիվիզմի միջազգային փորձ (տևողության ժամանակահատվածը տրամադրված չէ)
- Միջսահմանային քաղաքականություններ (տևողության ժամանակահատվածը տրամադրված չէ)

Մարտահրավերներ և լուծումներ [58]

ՀԿ-ների ներկայացուցիչները նշել են նաև Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված հետևյալ խնդիրները՝

- Փորձառության պակաս,
- Սարքավորումներից օգտվելու հնարավորության բացակայություն,
- Ենթակառուցվածքների բացակայություն,
- Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի բացակայություն,
- Օրենքների վատ կիրարկում,
- Ոլորտի ոչ ճիշտ կառավարում,
- Խոհեմության, ազնվության, ժողովրդավարության, ինքնիշխանության և երկարաժամկետ հեռանկարի բացակայություն:

Պատասխանող ՀԿ-ների դիտողությունները հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին հետևյալն են՝[59]

[57] Հ19
[58] Հ22
[59] Հ23

- Օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավականաչափ հստակ ու խստապահանջ չեն,
- Օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը չեն համապատասխանում երկրի բնապահպանական անվտանգության և միջազգային առաջավոր փորձի պահանջներին,
- Բնապահպանական և բնական պաշարների օգտագործման վճարները ցածր են և նպատակաուղղված են ծառայելու բաժնետիրական ընկերությունների շահերին՝ անտեսելով բնապահպանական և տնտեսական հետևանքները և հանրային շահը,
- Հանքարդյունաբերական թափոնները չեն դասակարգված որպես թափոններ Հանքարդյունաբերության օրենսգրքում, ուստի հանքագործական ընկերությունները ոչինչ չեն վճարում իրենց արտադրած պոչերի համար,
- Չկան մարդու առողջությանն ու գույքին պատճառած վնասի փոխհատուցման մեխանիզմներ,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և պետական բնապահպանական գնահատումը (փորձաքննություն) չեն ներառում էկոհամակարգերի վրա հետևանքները գնահատելու պահանջ,
- Օրենսդրությունը թերի է, բացակայում են անհրաժեշտ հասկացություններն ու ռազմավարությունները
- Օրենքները չունեն կիրարկման մեխանիզմներ:

ՀԿ-ները նշել են մի շարք քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի պահպանության և պատասխանատվության ժամանակակից ստանդարտների ներդրումն ապահովելու համար, այդ թվում հետևյալը՝[60]

- Պետք է խստացվեն բոլոր ստանդարտները,
- Պետք է խստացվեն աղտոտվածության մասին տեղեկացման պահանջները,
- Պետք է խստացվեն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջները,
- Պետք է խստացվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերը,
- Պետք է մեղմացվի արտոնատրման պահանջների խստությունը (մեկ պատասխանող ասաց, որ դրանք պետք է ավելի խիստ լինեն),
- Կա արհեստակցական միությունների և ինքնակառավարման կարիք,
- Պետք է վերահսկողություն հաստատվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենքի կիրարկման վրա,
- Պետք է երաշխավորվի բնական պաշարների վերաբերյալ տեղեկություններից օգտվելու հնարավորությունը,
- Պետք է երաշխավորվի ֆինանսական հաշվետվությունների թափանցիկությունը և հրապարակայնությունը,
- Պետք է լինեն առողջության պարտադիր ապահովագրման մեխանիզմներ,
- Պետք է ընդունել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր օրենք,

[60] Հ24

- Պետք է ավելի թափանցիկ դարձնել արտոնատրման պահանջը,
- Աղտոտվածության մասին տեղեկատվությունը պետք է մատչելի դարձնել հանրության համար,
- Պետք է լինի պետական և հանրային վերահսկողություն:

Հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված ապագա ծրագրերի առումով ՀԿ-ները հայտնել են հետևյալը՝[61]

- Համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, գիտական հաստատությունների, փորձագետների, միջազգային կազմակերպությունների, հատկապես նրանց հետ, որոնք աշխատում են բնապահպանական հարցերի, արտակարգ իրավիճակների, ռիսկերի նվազեցման և համայնքային ծրագրերի ուղղությամբ,
- Դատական գործընթաց,
- Բնապահպանական մոնիթորինգ,
- Զարգացման գործընթացի վերահսկում, բնական ռեսուրսների օգտագործում և արդյունահանում, շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության բացասական հետևանքների կանխում և վերացում, բնական ռեսուրսներից ստացված եկամուտների բաշխում
- Ազգային ցանցի ձևավորում՝ համաձայնեցնելու շրջակա միջավայրի պահպանությանը, ռացիոնալ տնտեսական զարգացմանը և սոցիալական արդարությանն ուղղված գործողությունները՝ առաջնորդվելով օրինականության, թափանցիկության և բանականության սկզբունքներով,
- Մոնիթորինգի արդյունքների ներկայացում հանրությանը և պետական հաստատություններին: Պետության կողմից խնդիրները լուծել չկարողանալու դեպքում ներկայացնել անհրաժեշտ պահանջներ և (կամ) իրականացնել միջոցառումներ՝ կանխելու կամ վերականգնելու արդեն պատճառված կամ հնարավոր վնասը:

2.4. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնակցության հրավեր ստացած հանքարդյունաբերական 7 ընկերություններից 2-ը հարցաթերթերը վերադարձրել են լրացված:

Ընդհանուր նկարագիր. կարողություններ

Աղյուսակ 22-ում նկարագրված են պատասխանող ընկերությունները, դրանց գործունեությունն ու փորձը:

[61] Հ25

Աղյուսակ 22. Հանքարդյունաբերական ընկերություններն ըստ իրենց գործունեության և փորձառության տարիների

Տեղական ընկերություններ	Գործունեություն[62]	Տևողություն[63]
Արմենիան Քափր Փրոգրամ ՓԲԸ	• Արդյունահանում	• Ավելի քան 10 տարի
Գեոթիմ ՓԲԸ	• Հետախուզում • Արդյունահանում • Բնապահպանական և սոցիալական գնահատում	• 5-10 տարի

Արմենիան Քափր Փրոգրամը շահագործում է Թեղուտի հանքը Հայաստանի Լոռու մարզում և աշխատանքի է ընդունել ավելի քան 500 մարդու: Գեոթիմը գործում է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում և ունի կազմակերպությունում աշխատող 20-50 մարդ: Երկու ընկերություններն էլ ունեն Հայաստանի օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ հանքարդյունաբերական իրավունքները, արտոնագրերը:

Ընկերությունների գիտելիքն ու փորձը հանքարդյունաբերության ոլորտի առումով ներառում է՝

- Գործընթացի մոնիթորինգ,
- Քաղաքացիների ներգրավվածություն որոշումների կայացման մեջ,
- Մարդու իրավունքներ,
- Շրջակա միջավայրի պահպանություն:

Որպես վերահսկողության մեխանիզմ՝ ընկերությունները նշել են բնապահպանական մոնիթորինգի, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրերը: Ընկերությունների տեղեկատվության հիմնական աղբյուրներն ըստ կարևորության (սա վերաբերում է միայն Գեոթիմին, քանի որ Արմենիան Քափր Փրոգրամը հարցին չի պատասխանել) հետևյալն են՝[64]

- Պատվիրված ուսումնասիրություններ, հաշվետվություններ,
- Գիտական աշխատություններ,
- Համապետական լրատվամիջոցներ,
- Միջազգային լրատվամիջոցներ,
- ՀԿ-ներ, ՀԿ հաշվետվություններ, համացանցային կայքեր:

[62] Հ1
[63] Հ4
[64] Հ20

Ընկերությունների կիրառած հասարակության հետ կապերի եղանակներն են՝[65]

- Համապետական լրատվամիջոցների հաղորդագրությունները,
- Մարզային լրատվամիջոցների հաղորդագրությունները,
- Տեղական համայնքային հանդիպումները,
- Երկրում գլխավոր շահագրգիռ կողմերի (ՀԿ-ներ, հետաքրքրված կողմեր) հ ե տ հանդիպումներ:

Ընկերությունների թիրախային խմբեր են՝

- Կառավարության կենտրոնական մարմիններ,
- Մարզային իշխանություններ,
- Հանքարդյունաբերական ընկերություններ,
- Տեղի բնակչությունը,
- ՀԿ-ներ,
- Տեղի գործարարությունը,
- Գյուղատնեսությամբ զբաղվողներ,
- Արմենիան Քափր Փրոգրամը նշել է նաև այլ խմբեր՝ նկատի ունենալով իր Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը:

Աղյուսակ 23-ում բերված է այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ Գեոթիմը համագործակցում է (Արմենիան Քափր Փրոգրամը հարցին չի պատասխանել) և համագործակցության ոլորտները:[66]

Աղյուսակ 23. Հանքարդյունաբերական ընկերության հետ համագործակցող կազմակերպություններն ու համագործակցության ուղղությունները

Կազմակերպություններ	Ուղղություններ
• Կառավարության կենտրոնական մարմին	• Թույլտվությունների, արտոնագրերի տրամադրում և այլն
• Տեղական իշխանություններ	• Շահագրիռ կողմերի ներգրավում, • Սոցիալական ծրագրեր, • Զարգացման ծրագրեր, • Նախագծի մշակում
• Տեղի բնակչություն	• Շահագրիռ կողմերի ներգրավում, • Սոցիալական զարգացման ծրագրեր • Զբաղվածություն
• ՀԿ-ներ	• Շահագրիռ կողմերի ներգրավում, • Հետազոտություններ • Մոնիթորինգ

[65] Հ11
[66] Հ8

• Տեղական գործարարություն	• Ենթակապալ, ծառայությունների պատվեր
• Գյուղատնտեսությամբ զբաղվողներ	• Գյուղատնտեսության զարգացման ծրագրեր

Սոցիալական պատասխանատվության ռազմավարությունների մասով ընկերությունները նշել են հետևյալը՝

- Ներգրավման ծրագրեր, համայնքի մասնակցություն
- Հանրության առջև հաշվետվություն
- Բնապահպանական կայունության ծրագրեր
- Բարոյական նորմերի վրա հիմնված շուկայավարում
- Ապահովագրություն (ընկերության աշխատողների համար)
- Հասարակական միջոցառումներ
- Համայնքային զարգացման ծրագրեր
- Այլ՝ նկատի ունենալով Արմենիան Քափր Փրոգրամի սոցիալական քաղաքականությունը

Խնդիրներ և կարիքներ

Քանի դեռ չի շահագործվում Գեոթիմին պատկանող ոսկու հանքը, ընկերությունը նշել է, որ դժվար կլինի առանձնացնել այն հարցերը, որոնց նրանք կբախվեն: Մասնավորապես, նրանք նշել են, որ ակնկալում են, որ կբախվեն կարողությունների հետ կապված հարցերի հետ շահագրգիռ կողմերի տարբեր խմբերի շրջանում, այդ թվում՝ ապագա աշխատողների և կանոնակարգողների հետ: Լուծում կհանդիսանան կարողությունների հզորացման ծրագրերը, ներգրավումը և ենթաօրենսդրական դաշտի բարելավումը: Հանքարդյունաբերության ոլորտում ավելի արդյունավետ աշխատելու համար ընկերությունը նշել է խորհրդատվությունների, վերապատրաստման և տեղացի աշխատողների գործնական փորձի կարիքը:[67]

Հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված հարցերի ուղղությամբ ավելի արդյունավետ աշխատելու համար անհարժեշտ տեխնիկական աջակցության կարիքները ներառում են՝

- Աշխատողների կարողությունների հզորացումը,
- Սարքավորումները,
- Տեղեկությունները, տվյալները,
- Պատասխանատվությունը, լիազորությունը:

Թեմաները, որոնց գծով ընկերությունը կցանկանար վերապատրաստվել, հետևյալն են՝

[67] Հ18

- Օրենսդրություն և ենթաօրենսդրական դաշտի մասին պատկերացում (1 շաբաթ),
- Հանքարդյունաբերական գործունեության բնագավառում միջազգային առաջավոր փորձը (1 շաբաթ),
- Թափանցիկություն (3 օր),
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (1 շաբաթ),
- Հողի, օգտակար հանածոների սեփականություն (1 օր):

Արմենիան Քափր Փրոգրամը խնդիրների և կարիքների հետ կապված հարցերին չի պատասխանել:

Մարտահրավերներ և լուծումներ [68]

Հանքարդյունաբերական ընկերություններն առանձնացրեցին Հայաստանում ոլորտի հետ կապված հետևյալ խնդիրները՝

- Ներդրումների պակաս,
- Փորձառության պակաս,
- Սարքավորումներից օգտվելու հնարավորության պակաս
- Ենթակառուցվածքների բացակայություն,
- Օրենքի վատ կիրարկում,
- Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի վատ կիրառում:

Հանքարդյունաբերության ոլորտում օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ կապված Արմենիան Քափր Փրոգրամը նշել է, որ դրանք բավարար են: Գեոթիմի ներկայացուցիչը նշել է, որ դրանք խիստ են, և օրենքի լավ ու վատ կողմերը երևում են կիրարկման ժամանակ: Այդուհանդերձ, կան օրենքներ, որոնք չափից դուրս խիստ են:
Ընկերությունները նշել են, որ պետք է ձեռնարկել հետևյալ քայլերը՝ ապահովելու ժամանակակից ստանդարտների ներդրումը շրջակա միջավայրի պահպանության և հանքարդյունաբերության ոլորտում կայուն պատասխանատվության առումով՝ [69]

- Բարեփոխել շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին օրենքը,
- Մեծացնել կարողությունները շրջակա միջավայրի վրա ազդեցության ավելի ճիշտ գնահատման համար,
- Բարելավել արտոնագրերի տրամադրման գործընթացը,
- Կատարելագործել, խստացնել աղտոտվածության մասին հայտնելու պահանջները,
- Կատարելագործել, խստացնել անվտանգության կանոնակարգերը,
- Անհրաժեշտության դեպքում արդիականացնել հին կանոնակարգերը տեխնոլոգիական առաջընթացի հետ համաքայլ գնալու համար:

[68] Հ22
[69] Հ24

Հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված ապագա պլանների առումով Գեոթիմը նշել է, որ պլանավորում է շահագործել Ամուլսարի ոսկու հանքը և համագործակցել բոլոր գլխավոր շահագրգիռ կողմերի հետ բնապահպանական և սոցիալական կառավարման, ինչպես նաև հասարակության վստահության և աջակցության առումով այն օրինակելի ծրագիր դարձնելու համար: Արմենիան Քափր Փրոգրամն այս հարցին չի պատասխանել: [70]

2.5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային 9 կազմակերպություններից, որոնց առաջարկվել է լրացնել հարցաթերթերը, 4-ը մասնակցել են հարցմանը:

Ընդհանուր նկարագիր. կարողություններ

Աղյուսակ 24-ում բերված է պատասխանած միջազգային կազմակերպությունների ցանկը՝ գործունեության համապատասխան բնագավառներով և հանքարդյունաբերության ոլորտում փորձառությամբ:

Աղյուսակ 24. Միջազգային կազմակերպություններն ըստ իրենց գործունեության և փորձառության տարիների

Միջազգային կազմակերպություններ	Գործունեություն[71]	Տևողություն[72]
Բնության պահպանության միջազգային միություն	• Ոչ մի կապ	•
Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակ	• Աջակցություն կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը բնական պաշարների կառավարման հարցում	• Ավելի քան 10 տարի
Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (ՄԱԿ ԶԾ)	• Հետազոտություններ	• 6 ամսից մինչև 1 տարի
Համաշխարհային բանկ	• Կանոնակարգեր • Հետազոտություններ	• 1-5 տարի

[70] Հ25
[71] Հ1
[72] Հ4

Հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված աշխատանքներում միջազգային կազմակերպություններում ներգրավված աշխատողների թվի մասին հարցին մեկ կազմակերպություն նշել էր մեկ մարդ, իսկ երկու կազմակերպություն ընտրել էին 2-10 մարդ տարբերակը: Մեկ կազմակերպություն՝ ԲՊՄՄ, չէր պատասխանել հարցին, քանի որ չի իրականացնում շարունակական միջոցառումներ այս ոլորտում:[73]

Պատասխանող միջազգային կազմակերպությունների գիտելիքն ու փորձը հանքարդյունաբերական ոլորտի հարցերի հետ կապված ներառում է՝[74]

- Շրջակա միջավայրի պահպանություն,
- Իրավապահպանություն:

Պատասխանող միջազգային կազմակերպությունները մոնիթորինգի առաքելություն չունեն:[75]

Միջազգային կազմակերպությունների կողմից հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված հարցերը լուծելու և միջոցառումներ իրականացնելու համար օգտագործված տեխնիկական ռեսուրսներն են՝[76]

- Կադրեր (օր.՝ հիգիենայի մասնագետներ, ինժեներներ, կենսաբան, վիճակագրագետ և այլն),
- Տեխնիկական կարողություններ (լաբորատոր սարքեր),
- Ֆինանսական միջոցներ,
- Լրատվամիջոցներ:

Միջազգային կազմակերպությունների տեղեկատվության հիմնական աղբյուրներն ըստ կարևորության հետևյալն են՝[77]

- Գիտական աշխատություններն ու պատվիրված ուսումնասիրությունները, հաշվետվությունները,
- Միջազգային և տեղական ՀԿ-ների զեկույցները, կայքէջերը և ընկերությունների հանրության համար մատչելի հաշվետվությունները, կայքերը,
- ՀՀ կառավարությունը, համապետական և միջազգային լրատվամիջոցները,
- Տեղական իշխանությունները,
- Տեղական լրատվամիջոցները:

Պատասխանած միջազգային կազմակերպությունների կողմից կիրառվող հասարակության հետ կապերի եղանակներն են՝[78]

---

[73] Հ6
[74] Հ5
[75] Հ13
[76] Հ16
[77] Հ20
[78] Հ11

- Համապետական լրատվամիջոցների հաղորդագրությունները,
- Մարզային լրատվամիջոցների հաղորդագրությունները,
- Տեղական համայնքային հանդիպումները,
- Այդ ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպումները:

Միջազգային կազմակերպությունների՝ հանքարդյունաբերական ոլորտի հետ կապված թիրախային խմբերն այն աշխարհագրական տարածքում, որտեղ նրանք գործում են, հետևյալն են՝[79]

- ՀՀ կառավարությունը,
- Տեղի բնակչությունը,
- Գյուղատնեսությամբ զբաղվողները,
- ՀԿ-ները:

Աղյուսակ 25-ում բերված է գլխավոր շահագրգիռ կողմերի ցանկը, որոնց հետ միջազգային կազմակերպությունները համագործակցում են, և համագործակցության ոլորտները՝[80]

Աղյուսակ 25. Կազմակերպությունները, որոնց հետ համագործակցում են միջազգային կազմակերպությունները, և համագործակցության ուղղությունները

Կազմակերպություններ	Ուղղություններ
• Միջազգային կազմակերպություններ (օր.՝ ԵԱՀԿ, ՄԱԿ ԶԾ, Համաշխարհային Բանկ, Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ Հայաստան)	• Եվրոպայի հարևանության քաղաքականության գործիքի(ԵՀՔԳ) «Անտառային օրենսդրության կիրարկում և կառավարում» ծրագրի իրականացում • Հետևանքների վերացում • Ուսումնասիրություններ
• ՀՀ կառավարություն, նախարարություններ (օր.՝ Բնապահպանության նախարարություն, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն)	• Իրավական կանոնակարգեր • Տվյալների հավաքում • Հետևանքների վերացում
• ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	• Տվյալների հավաքում
• Հանքարդյունաբերական ընկերություն (Արմենիան Քափր Փրոգրամ)	• Կարծիք օրենսդրական փոփոխությունների մասին

[79] Հ7
[80] Հ8

• Երևանի պետական համալսարանի կայուն զարգացման կենտրոն	• Օգտակար հանածոների կառավարում
• ՀԿ-ներ (ներառյալ՝ Օրհուս կենտրոնները)	• Իրավական, տնտեսական, հարկային բնագավառներում վերլուծություններ • Իրազեկության բարձրացում

Խնդիրներ և կարիքներ

Աղյուսակ 26-ում ամփոփ բերված են այն հարցերը, որոնց պատասխանող միջազգային կազմակերպությունները բախվել են օգտակար հանածոների կառավարման ոլորտում աշխատելիս, ինչպես նաև դրանց հնարավոր լուծումները:

Աղյուսակ 26. Միջազգային կազմակերպությունների հանդիպած խնդիրները և լուծումներ

Խնդիրներ, հարցեր[81]	Լուծումներ[82]
• Վատ կառավարում • Օրենքի վատ կիրարկում • Հանքարդյունաբերական ընկերություններից տեղեկությունների բացակայություն • Անդարձելի ազդեցություն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա • Ինտենսիվ հանքարդյունաբերություն ունեցող շրջանների աղքատացում • Կառավարության ընտրությունը՝ դառնալու «կցորդ երկիր», որը թույլ է տալիս զարգացած երկրներին շահագործել իր բնական պաշարները՝ վճարելով ցածր հարկեր և ստեղծելով բազմաթիվ բնապահպանական խնդիրներ	• Համակարգային մոտեցում, իրավական բարեփոխումներ և կադրային ռեսուրսների զարգացում • Ուժեղացված կանխարգելիչ մեխանիզմներ • Իրավական դաշտի ներդաշնակեցում միջազգային չափանիշների հետ և համապատասխան կանոնակարգերի ընդունում • Քարոզարշավներ, իրազեկության բարձրացում և կրթություն • Գլխավոր հարցը կառավարության սխալ քաղաքականությունն է հանքարդյունաբերության բնագավառում, ինչն անհրաժեշտ է փոխել

Օգտակար հանածոների կառավարման ոլորտում ավելի արդյունավետ աշխատելու համար միջազգային կազմակերպություններն ընդգծել են վերապատրաստումների և կառավարական մարմինների հետ համագործակցության կարիքը:[83]
Տեխնիկական աջակցության կարիքների թվում միջազգային կազմակերպությունները նշել են տեղեկատվության, տվյալների մատչելիությունը:[84]

[81] Հ9
[82] Հ10
[83] Հ18

Թեմաները, որոնց գծով միջազգային կազմակերպությունները կցանկանային վերապատրաստվել, հետևյալն են՝[85]

- Պատկերացում իրավական կարգավորման մասին (4 ժամ),
- Հանքարդյունաբերության ոլորտում միջազգային առաջավոր փորձը (4 ժամ):

Մարտահրավերներ և լուծումներ

Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներն ընդգծեցին Հայաստանում օգտակար հանածոների կառավարման ոլորտի հետ կապված հետևյալ խնդիրները՝[86]

- Փորձառության պակասը,
- Սարքավորումներից օգտվելու հնարավորության բացակայությունը,
- Ենթակառուցվածքների բացակայությունը,
- Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի բացակայությունը,
- Չափից դուրս շատ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր,
- Օրենքների վատ կիրարկում,
- Կոռուպցիան Հայաստանում և պետական պաշտոնյաների ուղղակի ներգրավվածությունը հանքարդյունաբերական գործունեության մեջ:

Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների դիտողությունները հանքարդյունաբերության ոլորտում օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին հետևյալն են՝[87]

- Օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը բավարար են,
- Օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը չափազանց խիստ, պահանջկոտ չեն:

Միջազգային կազմակերպությունները նշել են մի շարք քայլեր, որոնք անհարժեշտ է ձեռնարկել հանքարդյունաբերության ոլորտում ժամանակակից չափանիշների ներդրումը ապահովելու համար՝ բնապահպանական և սոցիալական պատասխանատվության առումով, ինչպես օրինակ հետևյալը՝[88]

- Բոլոր ստանդարտները պետք է ավելի խստացվեն,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերը պետք է ավելի խստացվեն,
- Աղտոտվածության մասին զեկուցելու պարտավորությունը պետք է ավելի խստացվի,
- Անվտանգության կանոնակարգերը պետք է ավելի խստացվեն,

---

[84] Հ17
[85] Հ19
[86] Հ22
[87] Հ23
[88] Հ24

- Արտոնատրման վերաբերյալ պահանջները պետք է մեղմացվեն,
- Պետք է լինի դաշտի համակարգային կարգավորում:

Օգտակար հանածոների կառավարման հետ կապված ապագա ծրագրերի առումով միջազգային կազմակերպությունները հայտնել են հետևյալը՝[89]

- Աղքատության և բնապահպանության միջև կապի ուսումնասիրություն (ՄԱԿ ԶԾ),
- Աջակցել թափոնների հետ կապված հարցերի իրավական կարգավորմանը (ՀԲ),
- Համագործակցել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

2.6. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն հարցաշարի 21-րդ հարցին շահարգգիռ կողմերի տված պատասխաններին՝ ստորև բերված է շահագրգիռ կողմերի ցանկը՝ ըստ հանքարդյունաբերական ոլորտի վրա ունեցած ազդեցության աստիճանի՝

- Պետական մարմիններ,
- Մասնավոր հատված,
- Տեղի բնակչություն,
- Քաղաքացիական հասարակություն,
- Միջազգային կազմակերպություններ,
- Լրատվամիջոցներ:

[89] Հ25

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

«Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում իրականացվող շահագրգիռ կողմերի հետազոտություն

Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցը Հայաստանի ամերիկյան համալսարանի և Հաց Աշխարհին Զարգացման ծառայության հետ համատեղ իրականացնում է «Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագիրը:

Ծրագրի թիրախային տարածաշրջանը Հայաստանի Հանրապետությունն է, մասնավորապես՝ Լոռու մարզը: Ծրագրի իրականացման առաջին փուլի խնդիրը հանքարդյունաբերության հետ առնչվող շահագրգիռ կողմերի հետազոտումն ու քարտեզագրումն է: Նրանց կարիքների և կարողությունների գնահատումն օգտակար կլինի հետագա աշխատանքի և հետագա գործընթացներում ներգրավվման համար:

Ծրագրի շահագրգիռ կողմերն են՝ են կենտրոնական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինները, գիտական հաստատությունները, տեղական ՀԿ-ները, հանքարդյունաբեության ընկերությունները և միջազգային կազմակերպությունները:

Խնդրում ենք լրացնել հետևյալ հարցերը.

Կազմակերպության անվանում		
Անուն, ազգանուն		
Պաշտոն		
Կոնտակտ		
Հասցե	Հեռախոս	Էլեկտրոնային փոստ

1. **Ի՞նչպիսի առնչություն ունեք հանքարդյունաբերական ոլորտի հետ և ի՞նչ բնույթի գործունեություն եք իրականացնում հանքարդյունաբերական ոլորտում:**

- Կարգավորում
- Կառավարում
- Ուսումնասիրում
- Շահագործում

- Մշակում
- Հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատում
- Հողերի կառավարում/ վաճառք
- Այլ, խնդրում ենք նկարագրել

2. Ի՞նչպիսի ազդեցություն ունի հանքարդյունաբերությունը ձեր կամ ձեր կազմակերպության վրա:

- Բացասական (Խնդրում ենք նկարագրել)
- Դրական (Խնդրում ենք նկարագրել)
- Ե՛վ դրական, և՛ բացասական (խնդրում ենք նկարագրել)
- Ոչ մի ազդեցություն չունի

3. Ինչպիսի՞ն է ձեր կազմակերպության գործունեության աշխարհագրությունը:

- Տարածաշրջան
- Մարզ
- Համայնք

4. Որքա՞ն ժամանակ է ձեր կազմակերպությունը զբաղվում հանքարդյունաբերությանն առնչվող խնդիրներով:

- <6 ամիս
- 6 ամսից – 1 տարի
- 1 – 5 տարի
- 5 – տարի
- >10 տարի

5. Ի՞նչպիսի փորձ և գիտելիք ունեք դուք կամ ձեր կազմակերպությունը հանքարդյունաբերական հարցերի առնչությամբ:

- Մոնիթորինգ
- Զարգացում
- Հասարակական ներգրավվածություն որոշումների ընդունման գործընթացում
- Մարդու իրավունքներ
- Շրջակա միջավայրի պահպանություն
- Այլ, խնդրում ենք նկարագրել

6. **Քանի՞ հոգի է ձեր կազմակերպությունում կամ համայնքում ներգրավված հանքարդյունաբերության հետ կապված աշխատանքներում: (*Խնդրում ենք թվարկել ըստ նրանց գործողությունների կամ բոլորը միասին*):**

- 1
- 2 -10
- 11 – 20
- 20 – 50
- 51 – 100
- 100 – 500
- > 500

Խնդրում ենք հստակեցնել, եթե բաժանված են ըստ բաժինների:

7. **Խնդրում ենք թվարկել ձեր կազմակերպության թիրախային խմբերը (ըստ գործողությունների կամ հարցերի, եթե հնարավոր է), որոնք առնչություն ունեն հանքարդյունաբերության ոլորտի հետ այն աշխարհագրական տարածքում, որտեղ ձեր կազմակերպությունն աշխատում է այդ ուղղությամբ:**

- Պետական կառավարում
- Տեղական կառավարում
- Հանքարդյունաբերող ընկերություններ
- Տեղական բնակչություն
- Հասարակական կազմակերպություններ
- Տեղական բիզնես
- Գյուղատնտեսությամբ զբաղվողներ
- Զբոսաշրջիկներ
- Այլ, խնդրում ենք նկարագրել:

8. **Ի՞նչ կազմակերպությունների հետ եք համագործակցում և ո՞ր ուղղություններով:**

Կազմակերպություններ	Ուղղություններ

9. **Ի՞նչ բնույթի խնդիրների է բախվել ձեր կազմակերպությունը օգտակար հանքարդյունաբերությանն առնչվող հարցերի շուրջ աշխատելիս:**

10. **Ձեր կարծիքով ո՞րոնք են խնդիրները/լուծումները:**

11. Ի՞նչ տեսակի հանրային կապեր հաստատելու միջոցներ ունի ձեր կազմակերպությունը:

- Ազգային ԶԼՄ-ներ
- Տեղական ԶԼՄ-ներ
- Տեղական համայնքային հանդիպումներ
- Նշվածներից ոչ մեկը
- Այլ, խնդրում ենք նկարագրեք

12. Արդյոք ձեր կազմակերպությունն ունի՞ որևէ տեսակի վկայագրում/հավաստագրում:

- Այո, խնդրում ենք նկարագրել:
- Ոչ

13. Արդյոք ձեր կազմակերպությունն ունի՞ հանքարդյունաբերության ոլորտի մոնիթորինգի որևէ տեսակի մեխանիզմ:

- Այո, խնդրում ենք նկարագրել
- Ոչ

14. Ի՞նչ բնույթի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության փաթեթ ունի ձեր ընկերությունը: *(Միայն հանքարդյունաբերական ընկերությունների համար)*

- Ներգրավվածություն ապահովող պլաններ / համայնքի մասնակցություն
- Հանրային հաշվետվողականություն
- Շրջակա միջավայրի կայունության ծրագրեր
- Էթիկական մարքեթինգ
- Ապահովագրություն
- Սոցիալական միջոցառումներ
- Այլ, խնդրում ենք նկարագրել

15. Ո՞րն է ձեր կազմակերպության պատասխանատվության շրջանակը երկրի հանքարդյունաբերական ոլորտում: *(Միայն կառավարական և պետական մարմինների համար)*

- Քաղաքականության մշակում
- Իրավակիրարկում
- Մոնիթորինգ
- Հողերի կառավարում
- Հանրային հաշվետվողականություն
- Այլ, խնդրում ենք նկարագրել

16. Տեխնիկական ի՞նչ ռեսուրսներ է ձեր կազմակերպությունն օգտագործում հանքարդյունաբերությանը վերաբերող հարցերին անդրադառնալու համար:

- Մարդկային ռեսուրսներ (Խնդրում ենք մասնավորեցնել մասնագիտացումները)
- Տեխնիկական կարողություններ (Խնդրում ենք հստակեցնել)
- Ֆինանսական միջոցներ
- Զանգվածային լրատվամիջոցներ
- Այլ, խնդրում ենք նկարագրել

17. Ինչպիսի՞ տեխնիկական աջակցության կարիքներ ունի ձեր կազմակերպությունը հանքարդյունաբերության ոլորտում ավելի արդյունավետ աշխատելու համար:

- Աշխատակազմի կարողությունների հզորացում
- Սարքավորումներ
- Տեղեկատվություն/տվյալներ
- Պատասխանատվություն/լիազորություններ
- Այլ, խնդրում ենք նկարագրել:

18. Որո՞նք են ձեր կազմակերպության կարիքները կարողությունների զարգացման և գիտելիքի լրացման հարցում (դասընթացներ, խորհրդատվություն և այլն) հանքարդյունաբերության ոլորտում առավել արդյունավետ աշխատելու համար:

- Դասընթացներ
- Խորհրդատվություն
- Գործնական աշխատանք
- Այլ, խնդրում ենք նկարագրել:

19. Օգտակար հանածոների ոլորտին առնչվող ի՞նչ թեմայով և տևողությամբ դասընթացների դուք կցանկանայիք մասնակցել:

#	Դասընթացների թեմաներ	Դասընթացների տևողություն
1.	Հանրային իրազեկում	
2.	Օրենսդրական և իրավական կարգավորումներ	
3.	Հանքարդյունաբերության միջազգային լավագույն փորձ	
4.	Թափանցիկություն	
5.	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	

6.	Հողերի/օգտակար հանածոների սեփականություն	
7	Այլ, խնդրում ենք նկարագրել	

20. Որո՞նք են այն հիմնական աղբյուրները, որոնց միջոցով ձեր կազմակերպությունը ստանում է տեղեկություններ հանքարդյունաբերության վերաբերյալ *(Խնդրում ենք գնահատել 1- 5 սանդղակով, որտեղ՝ 1 առավել կարևոր, 5 անկարևոր)*

- Կառավարություն
- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Հանքարդյունաբերական ընկերությունների հաշվետվություններ / համացանցային կայքէջեր
- Պատվիրված հետազոտություններ / հաշվետվություններ
- Գիտական հոդվածներ
- Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հաշվետվություններ / ինտերնետային կայքեր
- Ազգային ԶԼՄ-ներ
- Տեղական ԶԼՄ-ներ
- Միջազգային ԶԼՄ-ներ
- Այլ, խնդրում ենք նկարագրել

21. Ձեր կարծիքով որո՞նք են այն կազմակերպությունները, որ ունեն առավել կարևոր ազդեցություն հանքարդյունաբերության ոլորտում ***(Խնդրում ենք գնահատել 1-5 սանդղակով, որտեղ՝ 1 առավել կարևոր, 5 անկարևոր)***

- Կառավարման մարմիններ
- Քաղաքացիական հասարակություն
- Միջազգային կազմակերպություններ
- Մասնավոր ոլորտ
- Տեղական բնակչություն
- ԶԼՄ-ներ
- Այլ, խնդրում ենք նկարագրել

22. Ձեր կարծիքով որո՞նք են հանքարդյունաբերական ոլորտին առնչվող խնդիրները երկրում:

- Ներդրումների պակաս
- Օգտակար հանածոների պակաս
- Փորձագիտական պակաս
- Սարքավորումների մատչելիության պակաս
- Ենթակառուցվածքների պակաս

- Օրենքի և իրավական կարգավորումների պակաս
- Չափից շատ օրենսդրական և իրավական կարգավորումներ
- Օրենքի թույլ կիրարկում
- Այլ, խնդրում ենք նկարագրել

23. Ի՞նչ նկատառում ունեք հանքարդյունաբերությանը վերաբերող օրենքների և իրավական կարգավորումների հետ կապված:

- Դրանք ողջամիտ են
- Դրանք չափից շատ խիստ են (խնդրում ենք նկարագրել)
- Դրանք բավարար չափով խիստ չեն (խնդրում ենք նկարագրել)
- Այլ, խնդրում ենք նկարագրել

24. Ձեր կարծիքով ի՞նչ քայլեր է պետք ձեռնարկել հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական և բնապահպանական պատասխանատվությանը վերաբերող առաջադեմ չափանիշները ներդնելու համար:

Բարեփոխում	**Փոփոխություն**
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	Խստացնել
	Մեղմացնել
	Այլ
Լիցենզավորում	Խստացնել
	Մեղմացնել
	Այլ
Աղտոտման վերաբերյալ հաշվետվության պահանջներ	Խստացնել
	Մեղմացնել
	Այլ
Ֆինանսական հաշվետվության վերաբերյալ պահանջներ	Խստացնել
	Մեղմացնել
	Այլ
Հանքարդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքի անվտանգության կարգավորումներ	Խստացնել
	Մեղմացնել
	Այլ
Այլ	Խստացնել
	Մեղմացնել
	Այլ

25. Ի՞նչ հետագա ծրագրեր և ռազմավարություն ունի ձեր կազմակերպությունը: Ո՞ր կազմակերպությունների հետ եք դուք համագործակցում կամ համագործակցելու ապագայում: (Խնդրում ենք մանրամասնել)

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ԿԱՊ Է ՀԱՍՏԱՏՎԵԼ

Անվանում	Կապ հաստատած հաստատությունների թիվը	Պատասխանած հաստատությունների թիվը
Կենտրոնական իշխանության մարմիններ	**10**	**7**
1. Գյուղատնտեսության նախարարություն	Չեն պատասխանել	
2. Էկոնոմիկայի նախարարություն	Չեն պատասխանել	
3. Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		Պատասխանել են
4. Ֆինանսների նախարարություն	Չեն պատասխանել	
5. Առողջապահության նախարարություն		Պատասխանել են
6. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Պատասխանել են
7. Բնապահպանության նախարարություն		Պատասխանել են
8. Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն		Պատասխանել են
9. Տրանսպորտի և հաղորդակցության նախարարություն		Պատասխանել են
10. Քաղաքաշինության նախարարություն		Պատասխանել են
Մարզային իշխանություններ	**2**	**1**
11. Լոռու մարզպետարան		Պատասխանել են
12. Սյունիքի մարզպետարան	Չեն պատասխանել	
Տեղական ինքնակառավարման մարմիններ	**5**	**3**
13. Ագարակ համայնք		Չեն պատասխանել
14. Ալավերդի համայնք		Չեն պատասխանել
15. Շնող համայնք		Պատասխանել են
16. Թեղուտ համայնք		Պատասխանել են

17. Քաջարան համայնք		Պատասխանել են
Գիտական հաստատություններ	**7**	**5**
18. Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն		Պատասխանել են
19. Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) տնտեսագիտության ինստիտուտ		Պատասխանել են
20. Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) երկրաբանության ինստիտուտ	Չեն պատասխանել	
21. Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ		Պատասխանել են
22. Երևանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) աշխարհագրության ֆակուլտետ		Պատասխանել են
23. Երևանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) երկրաբանության ֆակուլտետ		Պատասխանել են
24. Երևանի պետական տնտեսագիտական համալսարան (ԵՊՀ)		Պատասխանել են
Տեղական ՀԿ-ներ	**16**	**10**
25. Ալավերդու Օրհուս կենտրոն		Պատասխանել են
26. Արմենիա Թրի Փրոջեքթ	Չեն պատասխանել	
27. Համահայկական բնապահպանական ճակատ		Պատասխանել են
28. Երիտասարդ բնապահպան իրավաբանների և տնտեսագետների ասոցիացիա		Պատասխանել են
29. Հայաստանի կանաչների միություն	Չեն պատասխանել	
30. Հայաստանի թռչունների պահպանման միություն	Չեն պատասխանել	
31. Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա		Պատասխանել են
32. Հայաստանի թռչունասերների կենտրոն		Պատասխանել են

33. Էկոէռա		Պատասխանել են
34. Էկոլուր		Պատասխանել են
35. Բնապահպանական իրավունքներ		Պատասխանել են
36. էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման ՀԿ	Չեն պատասխանել	
37. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա Վանաձոր	Չեն պատասխանել	
38. Կապանի Օրհուս կենտրոն		Պատասխանել են
39. Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն		Պատասխանել են
40. Վանաձորի Օրհուս կենտրոն	Չեն պատասխանել	
Հանքարդյունաբերական ընկերություններ	**7**	**2**
41. Արմենիան Քափր Փրոգրամ ՓԲԸ		Պատասխանել են
42. Դանդի թանկարժեք մետաղներ Կապան ՓԲԸ	Չեն պատասխանել	
43. Գեոթիմ ՓԲԸ		Պատասխանել են
44. Գեո Պրո Մայնինգ Գոլդ ՍՊԸ	Չեն պատասխանել	
45. Մետալ Փրինս ՍՊԸ	Չեն պատասխանել	
46. Մուլտի Գռուպ ՍՊԸ	Չեն պատասխանել	
47. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ	Չեն պատասխանել	
Միջազգային կազմակերպություններ	**9**	**4**
48. Ասիական զարգացման բանկ	Չեն պատասխանել	
49. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	Չեն պատասխանել	
50. Միջազգային ֆինանսական կորպորացիա	Չեն պատասխանել	
51. Բնության և բնական պաշարների պահպանության միջազգային միություն		Պատասխանել են
52. ԵԱՀԿ երևանյան գրասենյակ		Պատասխանել են
53. ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր		Պատասխանել են
54. Համաշխարհային բանկ		Պատասխանել են
55. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	Չեն պատասխանել	

56. Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ	Չեն պատասխանել	
Ընդամենը – շահագրգիռ կողմեր, որոնց ուղարկվել են հարցաթերթեր	56 – Չեն պատասխանել	31 – Պատասխանել են